ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի թերթ

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1993Թ. ՓԵՏՐՎԱՐԻՑ

Սեպտեմբեր, № 6 (161), 2002թ.

ՖԻԶԻՈԼՈԳԻԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ

Վերջերս ՀՀ ԳԱԱ ակադ. Լ.Ա.Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտում տեղի ունեցավ հանդիսավոր նիստ՝ նվիրված ականավոր ֆիզիոլոգ, խոշորագույն ֆիզիոլոգիական դպրոցներից մեկի՝ էվոլյուցիոն ֆիզիոլոգիայի, հիմնադիր, ԽՍՀՄ ԳԱ, ԽՍՀՄ ԲԳԱ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, աշխարհի բազմաթիվ ակադեմիաների պատվավոր անդամ, սոցիալիստական աշխատանքի հերոս, բժշկական ծառայության գեներալ-գնդապետ Լևոն Աբգարի Օրբելու ծննդյան 120-ամյակին:

Ակադեմիկոս Օրբելու կյանքին ու գիտական գործունեությանը նվիրված ընդգրկուն զեկուցումով հանդես եկավ ակադեմիկոս Վիկտոր Ֆանարջյանը, ապա մեծ գիտնականի մասին հուշեր պատմեցին ակադեմիկոսներ Կ.Ղարագյոզյանը, Լ.Մատինյանը և Կ.Քյանդարյանը, գյուղատնտեսական ակադեմիայի ակադեմիկոս Մ.Գրիգորյանը (ելույթի տեքստն ընթերցեց Լ.Օրբելու անվան Հայկական ֆիզիոլոգիական ընկերության գիտնական-քարտուղար Վ.Մալոյանը): Հյուրերից ելույթ ունեցավ ՌԳԱ Ի.Մ.Սեչենովի անվան էվոլյուցիոն ֆիզիոլոգիայի և կենսաքիմիայի ինստիտուտի լաբորատորիայի վարիչ, պրոֆ. Ի.Ա.Վարդանյանը (Սանկտ-Պետերբուրգ), Է.Բարսեղյանը և այլոք: Ֆիզիոլոգիայի ինստիտուտի գիտնական-քարտուղար Ե.Վ.Պապոյանը ընթերցեց Մոսկվայի և Սանկտ-Պետերբուրգի խոշորագույն ֆիզիոլոգիական կենտրոններից հղված ողջույնի ջերմ հեռագրերը: Նիստում հակիրճ զեկուցումով հանդես եկավ Ծաղկաձորի Օրբելի եղբայրների անվան տուն-թանգարանի փոխտնօրեն Գ.Մկրտչյանը:

Նիստի աշխատանքներին մասնակցում էին ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Ֆ.Սարգսյանը, բազմաթիվ հյուրեր:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս ԽՈՋԱԲԵԿՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ

1.Իրավիճակի գնահատումը արդի փուլում

Գյուղատնտեսությունը ժողովրդական տնտեսության կարևորագույն ճյուղերից մեկն է: Այն բավարարում է մարդկանց կենսական կարիքները: Այն չի փայլում իր առաջնակարգ դերով, խիստ նվազել է նրա արդյունավետությունը:

Խնդրի ուսումնասիրության հրատապությունը բխում է ՀՀ գյուղատնտեսության մեջ բանական զբաղվածության կառուցվածք ձևավորելու, աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու և զբաղվածների ընդհանուր թիվը կրճատելու անհրաժեշտությունից:

Ուսումնասիրության կարևորությունը թելադրվում է.

Առաջին, գյուղատնտեսության մեջ աշխատանքի չափազանց ցածր արտադրողականությամբ և աշխատողների թիվը զարգացած երկների համեմատական ցուցանիշի նկատմամբ բազմաթիվ անգամ ավելին լինելու փաստով: Եթե 1990թ. ՀՀ գյուղատնտեսության և անտառային տնտեսության մեջ զբաղված էին ժողովրդական տնտեսության մեջ ընդգրկվածների 17,7, ապա 2000թ. 44,3 տոկոսը: Այստեղ զբաղվածների ընդհանուր թիվը 2000թ. կազմում էր 564,6 հազար մարդ:

Երկրորդ, գյուղատնտեսության մեջ աշխատանքային ներուժի քանակական աճը չի ուղեկցվել որակական աճով: 1990-2000թթ. այս բնագավառում զբաղվածների թվակազմը ավելի քան երկուս ու կես անգամ ավելանալու պայմաններում մշակվող հողատարածքները խիստ կրճատվել են, համախառն բերքը, իրականում, չի ավելացել, նույնիսկ նվազել է:

Հողի, անասունների և արտադրության այլ միջոցների անժամանակ մասնավորեցումները հանգեցրին գյուղում փոշիացած մանր ապրանքային և, նույնիսկ, բնամթերային տնտեսաձևի հանդես գալուն: Խնդիրն այն է, որ օբյեկտիվ բնույթի գործոնների հետ միասին այդ ընթացքում կիրառվող անհեռատես և քմահաճ քաղաքականությունը, թույլ տրված կամայականությունները ու ճակատագրական սխալները գյուղատնտեսության մեջ աշխատուժի էքստենսիվ օգտագործման հիմք դրեցին, որը գնալով դարձավ գերիշխող: Ըստ որում, եթե հարթավայրային շրջաններում ընտանիքներին հատկացված քիչ հողաբաժինները մեծ մասամբ հնարավոր կլինի մշակել, ապա լեռնային և նախալեռնային շրջաններում հողատարածքները ամբողջությամբ շրջանառության մեջ ընդգրկելը առժամանակ կմնա մեծագույն պրոբլեմ: Նման պայմաններում գյուղացու աշխատանքն ինչքան էլ լարված ու նպատակամղված լինի, ցածր կլինի գյուղատնտեսական մթերքների ապրանքայնությունը:

Անհրաժեշտ էր գյուղում մասնավորեցումն իրականացնել նախապատրաստական որոշ շրջան անցնելուց հետո և այն էլ փուլ առ փուլ կազմակերպելով գյուղատնտեսության համար փոքր մեքենաների զանգվածային արտադրության և արտերկրներից դրանց ներմուծման մասշտաբները:

Ուսումնասիրություններից բխում է, որ գյուղատնտեսության մեջ աշխատուժի օգտագործման էքստենսիվությունն արտահայտվել է ամենուրեք, ինչպես նաև ինտենսիվ տիպի մշակաբույսերի մշակման մեջ ընդգրկված աշխատողների կրճատման և էքստենսիվ մշակաբույսերի մեջ ընդգրկվածների թվաքանակի խիստ ավելացման հետևանքով: Ավելացել են կարտոֆիլի և հացահատիկի արտադրության բնագավառում աշխատողների թիվը և նվազել են խաղողագործության, մրգերի բոլոր տեսակների, ծխախոտագործության, արժեքավոր բանջարաբոստանային մշակաբույսերի, եթերայուղերի արտադրության բնագավառում: Նվազել է նաև խոշոր եղջերավոր անասունների, ոչխարների ու

(Շարունակությունը 2-րդ էջում)



Մինեսոտիի համալսարան (ԱՄՆ):

Այստեղ ամենաարտոնյալ «դասակարգը» երիտասարդ գիտնականներն են, որոնց համախմբում է երկրին ու ժողովրդին ծառայելու ծգտումը:

Ազգային, նյութական, քաղաքական նախապաշարմունքներից ազատ այս երիտասարդները գտնվում են ամբողջ հասարակության ուշադրության կենտրոնում, քանզի նրանք են երկրի վաղվա տերը:

Հասարակական հարաբերությունների ինստիտուտի երիտասարդ գիտնականները.

Ո՞ՒՐ ԵՔ, ՏՂԱՆԵ՞Ր

Ակադեմիայում ստեղծվեց երիտասարդ գիտնականների խորհուրդ: Կար շրջան, որ այդ խորհուրդը ակտիվ գործունեություն էր ծավալում: Նրանց տրամադրված սենյակներում հավաքվում էին երիտասարդ գիտնականները, ծրագրեր մշակում...

Բայց պատահեց այնպես, որ արտասահմանից հովանավորչական գումար ստացվեց: ՀՀ ԳԱԱ ղեկավարությունը այդ գումարը, գրանտի ձևով, տրամադրեց երիտասարդ գիտնականներին: Ակադեմիայի նախագահությունը նիստ հրավիրեց, որտեղ խիստ հանդիսավոր պայմաններում հանձնվեցին գրանտները: Այս լուսանկարն էլ հենց այդ նիստից հետո է արվել, բոլորը գոհ են... երջանիկ... Դե, մեր ընթերցողներն արդեն ծանոթ են այս լուսանկարին:

Բայց, ցավոք, շաբաթն ավելի շուտ եկավ, քան ուրբաթը...

Երիտասարդ գիտնականներից նրանք, ում գրանտ չհասավ, վիրավորվեցին, մի քանիսն էլ չդիմացան փառքին ու սկսվեց «անգործությունը»: Աշխատասենյակները այլևս չբացվեցին, լռություն էր միջանցքում: Երբ հանդիպում էինք երիտասարդ գիտնականների ու հարցնում, թե ինչ է պատահել, ինչո՞ւ մարդ չկա, պատասխանում էին՝ վերջ, ավարտվեց մեր ինքնիշխանությունը: Ո՞ւմ մեղքով...

Չէ՞ որ ակադեմիայի ղեկավարությունը հատուկ միջոցառումների շարք էր մշակել նրանց ակտիվությունը բարձրացնելու համար: Ավաղ, ակտիվացան միայն կենտրոնախույզ ուժերը: Հիմա սենյակների փակ դռներին դեռ փակցված է «Երիտասարդ գիտնականների հասարակական խորհուրդ» ցուցանակը, պահպանվել է և նրանց միջանցքի մետաղավանդակը, ասում են նույնիսկ վերջերս բացվել են դռները:

Չկան միայն իրենք՝ երիտասարդ գիտնականների խորհրդի երիտասարդ անդամները...

Հուսանք...



ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ· ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

(Սկիզբը 1-ին էջում)

Խոզերի գլխաքանակը: Բազմաթիվ անգամ պակասել են, կամ իսպառ վերացել անասնապահական շատ մթերքների արդյունաբերական վերամշակման չափերը (ոչխարի բրդի, խոշոր եղջերավոր անասունների կաշեգործության, յուղարդի և այլն): Հողագործության և անասնապահական շատ անորակ արտադրանքներ ներմուծվում են, իսկ տեղական որակյալ արտադրանքները, ինչպես նաև նրանց վերամշակումից ստացված արդյունքները ոչ միայն տեղական շուկայում բացակայում են, այլ նրանց արտահանության մասին խոսք չկա անգամ:

Երրորդ, գյուղատնտեսությունում իշխող է դարձել բնատնտեսությունը: Հողի մասնավորեցումը տեղի ունեցավ գյուղատնտեսական արտադրության մեքենայացման համեմատաբար ցածր մակարդակի պայմաններում: Այստեղ մեղքի իր բաժինն ունի նաև մեքենայական պարկի անհամաստ մասնավորեցումը: Գաղտնիք չէ, որ կոլտնտեսություններին ու սովխոզներին պատկանող մեքենայական կայանները «մասնավորեցման» քողի տակ խորհրդանշական գներով նվիրվեցին առանձին մարդկանց: Ավելին, այն ուղեկցվեց մեքենայական կայանների փոշիացմամբ: Գյուղմեքենաներ չունեցող հողասեփականատերերի մի վիթխարի զանգված կանգնել է հողը մշակելու դժվար լուծելի խնդրի դեմ հանդիման: Չկա համապատասխան տեխնիկա, եղածն էլ արդեն ֆիզիկապես մաշվել ու շարքից դուրս է գալիս, լինելու դեպքում չի հերիքում վառելիքը, չկան պահեստամասեր, բարդություններ են ծագել առկա մեքենաներն ու գյուղգործիքներն օգտագործելու առումով: Նման պայմաններում գյուղացիների մի զգալի մասը, ի վերջո, համարյա հայտնվել է նախնադարյան աշխատապայմաններում հիմնականում ապավինելով իր ֆիզիկական կարողություններին:

Ահա թե ինչու գյուղացիների մեծ մասը կանգնել է մշակելի հողատարածքների մի զգալի հատվածը անմշակ թողնելու փաստի առջև: Ի՞նչ անեն մեքենազուրկ գյուղացիները: Վիթխարի միջոցներ են անհրաժեշտ հողը վարելու, ցանելու և բերքահավաքի համար: Անասնակեր չհայթայթելու և այլ պատճառներով մարդն ի վիճակի չէ բուծել և խնամել անասուններն այն չափով, որ իր պահանջմունքների հետ մեկտեղ մտահոգվի ապրանքային արտադրությամբ, որով էլ կարողանա հոգալ իր այլ կարիքները: Դրան են գումարվում վառելիքի պակասը և բերքը վաճառքի առաքելու չափազանց սուղ տրանսպորտային հնարավորությունները: Լեռնային և նախալեռնային շրջաններում այդ պատճառով չեն մշակվում վիթխարի բերրի հողատարածքներ, որոնք զգալի չափով կարող են ավելացնել հացահատիկի, կարտոֆիլի և բոստանային մշակաբույսերի առաջարկը: Մինչդեռ հարթավայրային շրջաններում բանջարաբոստանային մշակաբույսերի աշխատատարության պատճառով գյուղացին դրանք ի վիճակի չէ ձեռքով մշակել: Աճեցված բերքի մի զգալի մասը փչանում է շուկա առաքելու անհնարինության պատճառով: Այս բոլորին գումարվում են նաև ոռոգման հետ կապված հարցերը: Ոմանք ոռոգման համար հարկերը վճարել չեն կարողանում: Օրենքի ուժով հանգույցը լուծելու փոխարեն կառավարող մարմինները դիմում են մասնավոր միջոցների. բաց չեն թողնում ոռոգման համար ջրանցքով հոսող ջուրը: Այդ պատճառով վիթխարի ցանքատարածություններ, պտղատու և մրգատու այգիներ ջուր չեն ստանում:

Ուստի իրավիճակն ավելի է սրել գյուղատնտեսական մեքենաների մասնավորեցումը, քանի որ այն բաժին է դարձել հատ ու կենտ մարդկանց նախկին մեխանիզատորներին: Գյուղացին հիմնականում կանգնեց աշխատանքը ձեռքով կատարելու անխուսափելիության առջև:

Չորրորդ, Հայաստանը բնութագրվում է հոսուն, կառուցվածքային և թաքուն գործազրկության մեծ չափերով: Վերջինիս շարքերը համալրում է նաև գյուղի գերբնակչությունը:: Նկատենք, որ հողի մասնավորեցումն աշխատանքի շուկայում երկակի ազդեցություն է թողել: Նախ, նեղացրել է այդ շուկայի ոլորտը, քանզի սեփականատեր դարձած գյուղացին աշխատում է իր համար և աշխատուժը վաճառքի առարկա չի դառնում, այսինքն փոխանակության փուլով չի անցնում: Երկրորդ, ընդհակառակը, հողատեր գյուղացիների մի մասը հողը մշակել և անասնապահությամբ զբաղվել չի կարողանում և, ի վերջո, համալրում է արտագաղթողների, քաղաքներում աշխատանք փնտրող գործազուրկների շարքերը ընդլայնելով աշխատանքի շուկան: Աշխատանքի շուկան ինչ-որ չափով ընդլայնվում է նաև գյուղատնտեսական մթերքների վաճառքի հետ կապված գործարքներում:

Հինգերորդ, գյուղատնտեսության կոոպերացումն ու մասնագիտացումը գրեթե անհետացել է, երբ ամեն մի գյուղացի ամենուրեք իր հողակտորի որոշ մասը տրամադրել է հանապազօրյա կարիքների բավարարմանը, անկախ այն բանից, որ նա կարող էր ապահովել ավելի բարձր եկամտաբեր մշակաբույսերի մշակում: Նման պայմաններում հողին գերի դարձած գյուղացու աշխատանքով ստեղծված շատ բարիքներ հիմնականում բավարարում են միայն ընտանիքի պահանջները:

Ինչևէ, հավանաբար անհրաժեշտ էր նպաստել գյուղատնտեսական արտադրության կազմակերպման այնպիսի մեթոդների ձևավորմանը, որը, խրախուսելով արտադրողին, խթանի նաև նրա աշխատանքի մեքենայացման մակարդակի բարձրացմանը, գործող մեքենայական կայանը չփոշիացնելուն և նպատակամետ օգտագործմանը: Գյուղատնտեսական արտադրության մեքենայացման և աշխատանքի կոոպերացման միջոցով հնարավոր կլինի աշխատուժի օգտագործման էքստենսիվ եղանակից ինտենսիվին անցնելու, հետևաբար աշխատանքի արտադրողականության բարձրացման համար: Դրանով իսկ հնարավոր կլիներ ապահովել գյուղատնտեսության ընդլայնված վերարտադրությունը ոչ թե աշխատողների թվաքանակի ավելացման, այլ նվազման պայմաններում:

1. Բնակչության գաղթի ելևէջների կարգավորումը աշխատանքի արտադրողականության բարձրացման պայման է գյուղում

Խորհրդային իշխանության ամբողջ տարիներին հանրապետությունում մեծ բաժին էր ընկնում գյուղի բնակչության հաշվին քաղաքային բնակչության ավելացմանը: Հայաստանի ներկա տարածքում 1913թ. կար ընդամենը չորս քաղաք, որում բնակվում էր նրա ընդհանուր բնակչության լոկ 10,4 տոկոսը: Խորհրդային իշխանության տարիներին քաղաքային բնակչությունը ունեցավ աննախադեպ աճ: 1990 թվին արդեն կար 58 քաղաք և քաղաքատիպ ավան, ուր ապրում էին նրա ընդհանուր բնակչության ավելի քան 67 տոկոսը:

Մինչդեռ սեփականաշնորհումներից հետո գաղթի ընթացքը փոխեց իր ուղղությունը:

Գաղթի հոսքերի ուղղությունների փոփոխության նման ընթացքին մեծապես նպաստեցին մի շարք գործոններ, դրանք են.

Առաջին, քաղաքներում ստեղծված ծանր կացությունը,

Երկրորդ, գյուղատնտեսության մեջ հողի և գյուղատնտեսական այլ արտադրամիջոցների մասնավորեցումները, որոնք հանգեցրին բնակչության շարժին քաղաքներից դեպի գյուղ: Հողի սեփականաշնորհման ընթացքում գյուղում հողասեփականատեր դարձան նաև որոշ քաղաքային բնակիչներ:

Երրորդ, հանրապետության տնտեսական, սոցիալական, աշխարհաքաղաքական կյանքում առաջիկայում, սպասվելիք փոփոխություններից անկախ, քաղաքային բնակավայրերից դեպի գյուղական բնակավայրեր բնակչության արտագաղթն ավելանալու միտումը իր ուժը գրեթե կորցրել է: Երևույթների նման ընթացքը պայմանավորված է գյուղատնտեսության մեջ մասնավորեցումների գործընթացի ավարտով, թեև գյուղատնտեսության զարգացման ցածր մակարդակը հիմք դարձավ գյուղում, շատ չնչին չափերով, քաղաքային բնակչության հաշվին գաղթողներ ընդունելու համար: Բայց դա կարճատև էր և անցողիկ բնույթ կրեց:

Չորրորդ, ճիշտ է, գյուղատնտեսության մեջ մասնավորեցումներից հետո մեկ-երկու տարում գյուղից կատարվող արտագաղթը նվազեց, բայց երկար չանցած, կյանք մտավ հակառակ գործընթացը: Գյուղը նորից դարձավ արտագաղթի աղբյուր: Արտագաղթող բնակչությունը, սակայն, հիմնականում ուղևորվեց ոչ թե հանրապետության քաղաքներ, այլ մեծ մասամբ ուրիշ երկրներ: Հանրապետության քաղաքներում սուղ են զբաղվածության հնարավորությունները, լարված է սոցիալական իրավիճակը, առաջանում է բնակարանի հարց, ինչպես նաև բնակվարձի, էներգիայի, ջրի, աղբի, տրանսպորտի սակագների անընդհատ բարձրացում և այլն:

Նման և այլ կարգի բարդություններ ծագել են շուկայական հարաբերություններին անցում կատարող ցանկացած երկրում: Բայց այդ երկրներում մասնավոր տնական կապիտալ ներդրումներ կատարողների նկատմամբ պետությունը կիրառել է տնտեսական խրախուսման տարբեր մեթոդներ, հատկապես հարկային արտոնություններ: Շատ երկրներում գործադրվել է նաև վարչական հարկադրանք: Օրինակ, գյուղական բնակավայրերում կառուցվում են գյուղատնտեսական մթերքների արդյունաբերական վերամշակման փոքր ձեռնարկություններ, ստեղծվում են ագրոարդյունաբերական համալիրներ: Պետությունը տնտեսական լծակների օգնությամբ պետք է սահմանափակի բնակչության արտագաղթը գյուղական վայրերից դեպի քաղաքներ և խրախուսի նրանց շարժը խոշոր քաղաքներից դեպի քիչ բնակեցված և փոքր քաղաքներ:

Հայաստանում խնդիրը բարդանում է նրանով, որ բացակայում է պետական հսկողությունը գաղթողների ընդունման և բնակեցման, ներքին միջոցների ծևերի և մեթոդների մշակման, ինչպես նաև զբաղվածության ցածր հնարավորություններ ունեցող բնակավայրերից զբաղվածության կարիք ունեցող վայրեր գաղթը խրախուսելու գործում:

Թվարկած թերությունները ինքնին ուղենիշ են դրանք վերացնելու և գյուղատնտեսության մեջ աշխատանքի արտադրողականության անհրաժեշտ ընթացք ապահովելու համար: Անհրաժեշտ է ստեղծել նորմալ կապ գյուղի և քաղաքի միջև, զարգացնել արդյունաբերության վերամշակման ձեռնարկությունները բոլոր ուղղություններով, ստեղծել նորմալ կապ առաքվող գյուղատնտեսական մթերքների մատակարարման հարցում: Ներկայումս իշխում է քաոսայնությունը: Պետք է մրցությամբ կարողանալ, իրոք, տեղեր զբաղեցնել գյուղատնտեսական արդյունքների արտադրության գործը կազմակերպելու համար:

(Շարունակությունը հաջորդ համարում)

ՕՐՎԱՆ Է ՏՎԵԼ ՄԵԶ ՀԱՑ ՈՒ ՋՈՒՐ, ՕՐՎԻ ՏԱԿՆ ԷԼ ԿՀԱՆԳՉԵՆՔ...



ԳՈՒՐԳՈՒՐԱՆՔ ՄԱՅՐԵՆԻԻՆ

*«Ազդակ»*ի 29 Ապրիլ 2002ի թի նամականիով՝ նամակագիրը՝ Ե.Մ., կը ծրագրէ քննարկումի առարկայ դարձնել թերթին ուղղագրական կարգ մը կիրարկումները ու առ այդ կը սկսի այն բառերով, որոնք աւանդականօրէն գրուած են *ոյ*-ով եւ ներկայիս կ'արտասանուին *ու*-ով. այսպիսիներէն թուենք՝ *անուշ, զգուշ, նմուշ, վիրաբուժ* եւ շատ ուրիշներ: Ասոնց կողքին ունինք կարգ մը այլ բառեր, որոնք նմանապէս կը գրուին *ոյ*-ով եւ ներկայիս կ'արտասանուին *ույ*-ով. օրինակ՝ *լոյս, յոյս, կոյս, գոյն* եւ շատ ուրիշներ: Նամակագիրին փափաքն է, որ առաջին խումբի բառերը նոյնպէս գրուին *ոյ*-ով, այսինքն՝ *անոյշ, նմոյշ, վիրաբոյժ:* Ինչո՞ւ այս առաջարկը եւ որոնք են նամակագիրին առարկութիւնները:

«Յստակ է, – կը գրէ ան, – որ *ոյ* երկբարբառին եւ *ու* ձայնաւորին միջեւ կայ հնչիւնային տարբերութիւն եւ երբ զիրար փոխարինեն, լեզուն կը կորսնցնէ հնչիւնային իր նրբութիւնը»: Առաջին ակնարկով իսկ նկատելի է, որ նամակագիրը սխալ ախտաճանաչում մը ու սխալ հաստատում մը կը կատարէ. *անուշ, զգուշ, նմուշ* գրողը *ոյ* երկբարբառը *ու*-ի վերածած չ'ըլլար, այլ պարզապէս կը հետեւի իր արտասանութեան բարբառը: Լեզուի մը համար, որ կը յարգէ ինքզինք, ասոնք երկու բոլորովին տարբեր էութիւններ են, որոնք ոչ մէկ ձեւով ու չափով կրնան նոյնանալ, սակայն ահա անոնք նոյնացած են նամակագիրին մտքին մէջ, ինչպէս նոյնացած են ձեռնարկներուն մէջ այն անհատներուն, որոնք հաւասարապէս կը գրեն *անոյշ* եւ *կապոյտ, զգոյշ* եւ *կոյս* եւ այլն:

Նամակագիրը իր առաջարկած ուղղագրութիւնը արդարացնելու համար կը բերէ երրորդ փաստարկում մը, որ ստուգաբանական է. «Եթէ բառիս արմատը *բուժ* ըլլար, – կը գրէ ան, – ապա պէտք է ըսէինք *բժել»*, քանի որ *ու* ձայնաւորը, օրինակ՝ *սուր*, կը սղի, օրինակ՝ *սրել:* Եւ կը թուի թէ իրաւունք ունի. սակայն այս փաստարկումը եւս որեւէ արժէք չի ներկայացներ, որ մենք *բուժել* բայը պատրաստ ստացած ենք գրաբարէն, ուր բառիս արմատը իրօք *բոյժ* կամ *բույժ* կ'արտասանուէր, եւ մենք չէ որ կերտած ենք զայն. երկրորդ՝ խօսողին կամ գրողին համար երբեք նշանակութիւն չունի, թէ տուեալ բառը ի՛նչ ծագում ունի ու ի՛նչ ճամբով հասած է իրեն. երրորդ՝ ունինք *ոյ* երկբարբառը կրող բառեր, որոնց այդ երկբարբառը անհետացած է, օրինակ՝ *բունբնաւեր* եվ այլն, իսկ մենք այդ բոլորին ժառանգորդն ենք միայն: Այսօր ունինք փաստօրէն պատկառելի թիւով բառեր, որոնց երբեմնի *ոյ* երկբարբառը կ'արտասանուի *ու՝ անուշ, զգուշ, նմուշ, վիրաբուժ* եւ այլն: Հարց է, թէ մենք այդ բառերը պիտի գրենք ըստ իրենց արտասանութեա՞ն, թէ՞ ըստ աւանդութեան. մեր ամբողջ ճիգը պիտի կայանայ այս ընտրութեան մէջ: Մնացեալ բոլոր փաստարկումները, որոնք այս կամ այն առիթով կը բերուին աւանդական գրութեան ի նպաստ, որեւէ արժէք չունին:

Հիմա տեսնենք, թէ ինչպէ՞ս վարուած ենք այլ առիթներով:

Մեսրոպ կ'արտասանէր *ցորեան* ու կը գրէր *ցորեան,* ուր *եա* նոյնպէս երկբարբառ է, իսկ մենք կ'արտասանենք *ցորեն* ու կը գրենք *ցորեն,* ուր *ե* մենաբարբառ է կամ պարզ ձայնաւոր է. նոյնպէս ալ մեր նախնիներուն *գեհեան* ու *պատճեան* բառերուն դէմ մը գրենք *գեհեն* ու *պատճեն* (սխալմամբ տարածուած է պատճէն ձեւը), այսինքն՝ կը հետեւինք մեր արտասանութեան: Ուեւէ մէկու միտքէն կ'անցնի՞ գրել *ցորեան, գեհեան* ու *պատճեան,* ապա արտասանել՝ *ցորեն, գեհեն* ու *պատճեն:*

Գրաբարը կ'ըսէր *եկայք, երթայք,* ուր *այ* այլ պարզապէս կը հետեւի իր արտասանութեան ու կգրէ ըստ այնմ, քանի որ *անուշ*-ին մէջ երկբարբառային արտասանութիւն գոյութիւն չունի: *Իսկ գրութիւնը արտասանութեան մօտեցնելը, անով նոյնացնելը ամէն ուղղագրութեան իտեալն է:* Ուրեմն *«Ազդակ»*ի ըրածը, ինչպէս նաեւ անոր հետեւողներունը այդ իտեալին ճամբուն վրայ ձեռք բերուած թէկուզ աննշան, սակայն շատ գովելի նախաձեռնութիւն մըն է:

«Հայերէնի քերականութիւնն ու ուղղագրական կանոնները կ'ըսեն, որ այդ բառերը պէտք է գրուին ոչ թէ *ու*-ով, այլ *ոյ*-ով, այսինքն՝ *վիրաբոյժ, աշխոյժ, նմոյշ, զգոյշ,* ինչպէս կը գրուին *գոյժ, բոյն, գոյն, բոյս,* եւ այլն», – կը շարունակէ նամակագիրը: Նախ հայերէնի որեւէ քերականութիւն ու որեւէ ուղղագրական կանոն նման բան չէ ըսած ու չի կրնար ալ ըսել. իսկ թէ անհատներ նման բաներ ըսած են՝ այդ բոլորովին տարբեր բան է: Երկրորդ՝ նամակագիրը այստեղ կը շփոթէ, աւելի ճիշդը՝ իրարու կը խառնէ բառային երկու այնպիսի խումբեր, որոնք շատ կը տարբերին իրարմէ: Առաջին խումբին մէջ կը մտնեն այնպիսի բառեր՝ *վիրաբուժ, աշխուժ, նմուշ, զգուշ...* որոնց մէջ կը լսենք *ու* պարզ ձայնաւորը, իսկ երկրորդ խումբին մէջ կը մտնեն բառեր՝ *բոյն, գոյն, բոյս...* որոնց մէջ կը լսենք *ոյ* կամ *ույ* երկբառը անհետացած է, օրինակ՝ *բոյն-բնաւեր, պոյտ-պտուկ* եւ այլն:

* * *

Այս բոլորով հանդերձ մենք շատ լաւ կ'ըմբռնենք նամակագիրին մտահոգութիւնները եւ սուտ կոյր ձեւացնելու նպատակով չենք գրեր այս ակնարկը: Պայմանաւ որ հեղինակն ու իրեն պէս գրողներն ալ, որոնք մեծամասնութիւն են, փորձեն քիչ մը մեզ ըմբռնել ու մանաւանդ գիտակցին, որ լեզուներու մէջ կայ բարեշրջութիւն ըսուած երեւոյթը, որ անշեղ կը գործէ, ու պէտք է ունկնդիր ըլլանք անոր ձայնին:

Հարցը կը դրուի այսպէս:

Վաղ ոսկեդարուն եւ անշուշտ անկէ ալ առաջ ունեցած ենք քանի մը հարիւրեակ բառեր, որոնք գրուած են *ոյ* երկբարբառով, ինչպէս՝ *զգոյշ, գոյն,* եւ այլն. ասոնց մէջ *ոյ* երկրաբարբառը միշտ ալ արտասանուած է *ոյ,* այսինքն՝ *ույ:* Ժամանակի բերումով ու բարեշրջութեան օրէնքով՝ այս բառերէն ոմանց մէջ *ոյ* երկբարբառը հետզհետէ մենաբարբառանալով դարձած է պարզ *ու* ձայնաւոր՝ *անուշ,* իսկ մնացեալները շարունակած են պահել իրենց երկբարբառը՝ *գոյն:* Ինչո՞ւ բոլորը նոյն բարեշրջութեան օրէնքին չեն հետեւած՝ չենք գիտեր, եւ նման հարցումներ առհասարակ պատասխան չունին. ժամանակն ու լեզուն կիրարկողները այդպէս տնօրինած են:

Գրաբարը կ'ըսէր *եկայք, երթայք,* ուր *այ* նոյնպէս երկբարբառ է, իսկ մենք կ'ըսենք *եկաք, երթաք* ու կը գրենք *եկաք, երթաք,* ու բնաւ չենք մտածեր գրել *եկայք, երթայք* ու ասոնց արտասանել *եկաք, երթաք:* Պարզ է՝ այստեղ եւս կը հետեւինք արտասանութեան, ինչ որ միակ ճիշդ ուղին է:

Գրաբարը կ'ըսէր *յոյս* ու կը հոլովէր *յուսոյ.* ու կը գրէր ճիշդ այսպէս՝ *յուսոյ,* քանի կ'արտասանէր *յուսոյ:* Մենք կ'ըսենք *յոյս* ու կը հոլովենք *յոյսի* ու կը գրենք *յոյսի* առանց երբեք մտածելու, թէ գրաբարի մէջ սեռականը կ'ըլլայ *յուսոյ,* հետեւաբար մենք ալ ստիպուած էինք գրել *յուսի* ու արտասանել *յոյսի:*

Եզրակացութիւնը շատ յստակ է ու պատգամն ալ. *գրութիւնը հարկատու է արտասանութեան, եւ ոչ թէ արտասանութիւնը հարկատու է գրութեան:* Եւ ուղղագրութիւն մը պարզ, ճիշդ ու տրամաբանական է այնքանով միայն, որքան ան ճիշդ կը վերարտադրէ արտասանութիւնը:

Այս բոլորով հանդերձ Ե.Մ. ազատ է արտասանելու *անուշ* ու գրելու *անոյշ.* ասոր համար ոչ ոք հաշիւ պիտի պահանջէ նման երեւոյթներու համար. առնուազն այդ ազատութիւնը լեզուական, ուղղագրական ու հնչիւնաբանական անգոյ կանոններով պէտք չէ պաշտպանել, որովհետեւ այդպիսիները չկան:

ԱՐՄԵՆԱԿ ԵՂԻԱՅԵԱՆ

«ԿՅԱՆՔԻ ՏԱՆԸ ԲԱԶՈՒՄ ՍԵՆՅԱԿՆԵՐ ԿԱՆ...»

Իր ժամանակին գիտնականները ցնցող փորձեր են կատարել նկարները և նամակները «խոսեցնելու» համար: Իսկ ի՞նչ էր նշանակում «խոսեցնել»: Վերցնում էին, օրինակ, Լեոնարդո Դա Վինչիի կտավը, նրա վրայով սահեցնում ձայնարկիչի ասեղը... և պատրաստ է: Դուք սկսում եք ձեր ականջներով լսել, թե ինչ էին խոսում հանճարեղ գեղանկարչի արվեստանոցում մի քանի հարյուր տարի առաջ: Նման փորձեր էին անում նաև ռազմաճակատից ստացված նամակների հետ: Եվ զինվորական դեղնած «եռանկյունուց» կարելի էր պարզորոշ լսել հեռավոր ռազմաճակատի մարտի աղմուկը: Սակայն այս «երևույթը», չգիտես ինչու, անհանգստացրեց պետական անվտանգության մարմիններին, հետազոտությունները արգելվեցին: Եվ ոչ մեկին հայտնի չէ, շարունակվո՞ւմ են այդ փորձերը, թե մոռացության են տրվել: Որովհետև այդ հայտնագործությունը ընկել էր «խիստ գաղտնի» պիտակի տակ և լռության մատնվել:

Ամեն ինչ սկսվեց մի սովորական կավե սափորից: Ռուս գիտնական Վալենտին Պսասոմշչիկովի վկայությամբ, նրա գործընկերները միտք հղացան ձայնասկավառակի փոխարեն կավե կճուճը դնել ձայնարկիչի վրա, մետաղյա ասեղն էլ փոխարինել սրածայր փայտիկով: Հենց որ փայտիկի ծայրը հպվում էր կճուճի կողերին, բարձրախոսում արթնանում էին ձայներ, որոնք շատ նման էին այն ձայներին, որ լսվում է, երբ բրուտը դազգահի վրա սկսում է ձև տալ կավին: Դազգահի անիվի աղմուկը արտաբերվում էր չափազանց պարզորոշ: Հենց այս հաջող փորձն էր, որ գիտնականներին միտք հուշեց «խոսեցնել» նաև նկարը: Գտան մի գեղանկարչի, որը համաձայնեց մասնակցել նման արտասովոր փորձի: Նկարիչը սկսեց նկարել փորձարարներից մեկի դիմանկարը: Միաժամանակ միացված էր երաժշտություն ծանոթ մեղեդիով:

Երբ նկարը պատրաստ էր և ներկը չորացած, գիտնականները խոշորացույցով սկսեցին զննել կտավի մակերևույթը: Նրանք նկատեցին, որ վրձնահարվածներից մի քանիսին ուղղահայաց երևում էին ալիքաձև անհարթություններ: Դրանց վրայով սահեցրին ձայնարկիչի ասեղը: Եվ, ո՜վ զարմանք, լսվեց ճիշտ այն նույն մեղեդին, որ հնչել էր արվեստանոցում, նկարելու ժամանակ: Այս փորձերը կատարվել էին 60-ական թվականներին: Իսկ երբ հայտնվեցին համակարգիչները, նման հետազոտությունները դարձան ավելի արդյունավետ:

Այսպես, օրինակ, Մոսկվայի գիտահետազոտական ինստիտուտներից մեկում նմանօրինակ փորձեր կատարվեցին ավելի կատարյալ տեխնիկայով: Սկսեցին հետազոտել մի դպրոցականի թելադրություն: Համակարգիչը փայլուն կատարեց տրված խնդիրը: Գրեթե անթերի արտաբերվեց թելադրող ուսուցչուհու ձայնը: Հետազոտողները պարզեցին նաև, որ մակերեսին կարող են դրոշմվել ոչ միայն ձայները, այլև անցած ժամանակների իրադարձությունների պատկերները: Այլ խնդիր է, որ այսօր դեռ չկան այնպիսի սարքավորումներ, որոնցով հնարավոր լինի երևակել այդ պատկերները: Սակայն հայտնի են դեպքեր, երբ դրանք երևակվել, արտաբերվել են ինքնաբերաբար: Հենց սրանով են գիտնականները բացատրում դղյակներում ուրվականների հայտնվելը:

Այս փորձերը, որոնք չափազանց անպատեհ արգելվեցին պետական անվտանգության մարմինների կողմից, ամենայն հավանականությամբ պարուրված են պատմություններով, որոնք կատարվել և կատարվելու են մարդկանց հետ: Այդ պատմությունները անբացատրելի են, սակայն դրանք աներկբա վկայում են, որ մեր անցյալը ոչ մի տեղ չի գնում: Այն պետք է միշտ գոյություն ունենա մեկ այլ հարթության մեջ, որը պարզապես անհասանելի է մեզ համար:

Ահա, օրինակ, ինչ է տեղի ունեցել նշանավոր գեղանկարիչ Գաբրիել Ռոսետտիի հետ: Նա սիրահարվում է իր բնորդուհի էլիզաբեթին, ամուսնանում նրա հետ: Սակայն երջանկությունը կարճ է տևում: Էլիզաբեթը մահանում է թոքախտից: Գաբրիելը ամբողջ կյանքում չմոռացավ նրան, կարոտեց ու տանջվեց, բանաստեղծություններ նվիրեց նրան և նկարեց: Շատ ուրիշ նկարների շարքում նա ստեղծեց նաև «Երանական էլիզաբեթին» կտավը: Մի արվեստագետ այդ նկարի առթիվ նկատեց, որ այն շատ նման է Բոլոնիայի գեղարվեստի թանգարանի հովանավոր սուրբ Ագնեսային: Ռոսետտին չափազանց զայրացավ և սկսեց ապացուցել, որ երբեք չի եղել Բոլոնիայում և չի տեսել «Ագնեսա» նկարը: Մեկ տարի անց նկարչի եղբայրը, որ մեկնում էր Իտալիա, խոստացավ այցելել թանգարան և տեսնել սուրբ Ագնեսայի դիմանկարը: Երբ նրան տարան կտավի մոտ, նա պարզապես ցնցվեց. Ագնեսան զարմանալիորեն նման էր էլիզաբեթին:

– Չէի՞ք ցանկանա տեսնել հեղինակի Անջելյերիի, ինքնադիմանկարը, նա ապրել է 400 տարի առաջ, – հարցրեց թանգարանի աշխատակիցը:

Ռոսետտին սիրով համաձայնեց: Եվ անսպասելիությունից պապանձվեց. ինքնադիմանկարից իրեն էր նայում եղբայրը Գաբրիելը, ավելի ստույգ՝ ճիշտ նրա կրկնօրինակը:

Վերադառնալով Լոնդոն, եղբայրը ամեն ինչ պատմեց Ռոսետտիին: Սակայն Գաբրիելը, կարծես թե, նույնիսկ չզարմացավ և ասաց.

– Կյանքի տանը շատ սենյակներ կան: Ես կարծում եմ, որ դու իսկապես տեսել ես ինձ և էլիզաբեթին, որոնք 400 տարի առաջ արդեն սիրում էին իրար: Եվ ես շատ եմ ուզում հուսալ, որ ինչ որ ժամանակ այդ բազմաթիվ սենյակներից մեկում մենք նորից կհանդիպենք իրար:

Կարապի լիճը Երևանում

ԳՅՈՒՂԸ ՄՏՔԻ ԿԱՐՈՏ Է

Կար ժամանակ, երբ գյուղական շրջաններում հատուկ հողատարածություններ էին առանձնացնում սերմնաբուծության համար: Հացահատիկ, կարտոֆիլ, բազմամյա խոտաբույսեր... Հիմա այդ մասին խոսելիս գյուղացին նույնիսկ չի հիշում, թե դա ե՞րբ էր ու, ընդհանրապես, նման բան կար: Այսօր, երբ գյուղատնտեսների, գյուղատնտես-գիտնականների մեկ շնչին ընկնող քանակով մենք վաղուց հետ ենք թողել ԱՄՆ-ին, Բրիտանիային, Ֆրանսիային, էլ չենք խոսում մյուս երկրների մասին, մեր գյուղացին տարակուսանքով հարցնում է.

– Բա ո՞ւր են նրանք...

– Մի քիչ էլ որ սպասեք, կերևան, պարոն գյուղացիներ:

Այ, տեսեք, թե այս լուսանկարում ինչ փորձեր են դրվում գյուղի համար: Հիմա առաջվա միամիտ ագրոգիտնականները չեն, որ հողամաս ունենան, փորձադաշտ պահեն, հիմա լաբորատորիայում մի երկու բույս կաճեցնեն, մանրադիտակի տակ կստուգեն, ստուգվածը գրի կառնեն ու... Հայաստանում հերթական անգամ կծնվի մի նոր ատենախոսություն՝ հողի ինտենսիվ մշակման, վնասատուների դեմ պայքարի, բերքատվության կտրուկ բարձրացման մասին:

Բա իզուր է հայկական պտուղը (այդպես է լատիներեն կոչվում ծիրանը) շուկայում գնահատվում 500 – 600 դրամ: Բա իզուր են ասում՝ *մերն ուրիշ է:* Բա կեռա՞սը, կանաչի՞ն, ո՞րն ասենք... Բարձր, շատ բարձր է գնահատվում մեզ մոտ այն ամենը, ինչ հողն է տալիս՝ գյուղի բնագավառի գիտնականների ատենախոսություններին խառնված: Դե արի ու մի հավատա, որ մենք վաղուց անցել ենք ոչ միայն Ամերիկային, Բրիտանիային ու Ֆրանսիային, այլև (և

հատկապես) ընդհուպ մոտեցել ու կանգ ենք առել Սենեգալի, Ուգանդայի, Սոմալիի մակարդակին, անշուշտ՝ եկամուտների ու ծախսերի, մթերքի գների առումով:

Իսկ լաբորատորիաներում շարունակվում են սերմնաբուծական տքնաջան որոնումները: Դե ինչ արած, գյուղը մտքի ու ատենախոսությունների բարձր բերքի հիանալի աղբյուր է...

ՍԵՐՍ ԳԱՂՏԻԻ ԹՈՂ ՄՆԱ...

«ՀԱՅԿԱԿԱՆ» ՍԿԱՆԴԱԼ ՌՈՒՍԱԿԱՆ ՊՈՊ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Սույն սկանդալը բռնկվեց մոսկովյան ռեստորաններից մեկում, որտեղ Ֆիլիպ Կիրկորովը հերթական անգամ «շիք» էր տալիս՝ նշելով իր նոր ալբոմի ծնունդը:

Արևելյան մեղեդիների նկատմամբ երգչի սիրահարվածությունը այս ալբոմում հասել է իր գագաթնակետին. ալբոմում ներկայացված գրեթե բոլոր երգերը թուրքական էին՝ թարգմանված ռուսերեն:

Լավ տրամադրությունը, շնորհավորանքները, ընտիր խմիչքները և ուտեստները կարծես երաշխավորել էին շնորհանդեսի բարձր մակարդակը: Սակայն այնպես պատահեց, որ շնորհանդեսին ներկա Իրինա Ալլեգրովայի մեջ հանկարծ եռաց հայկական արյունը: Իսկ երբ բարկանում է Ալլեգրովան, Աստված հեռու տանի: Զայրացած պոպաստղը ալբոմի հեղինակին հիմնավորապես մեղադրեց նրանում, որ Կիրկորովը անամոթաբար հրաժարվում է իր հայկական արմատներից: Այն ժամանակ, երբ Կիրկորովի «մայրիկը» (Ալլեգրովան նկատի ունի Ալլա Պուգաչովային) ծխում է միայն հայկական սիգարետներ, իսկ Ֆիլիպի հայր՝ Բեդրոսը, վերջերս նշած իր շքեղ հոբելյանի ժամանակ ոչ միայն սրտառուչ ու հրաշալի կատարեց հայկական «Ծաղիկներ, ծաղիկներ» երգը և հրապարակավ խոստովանեց, որ երբեք չի մոռանում իր հայկական արմատները, Ֆիլիպ Բեդրոսովիչը ոչ միայն հրաժարվում է իր գեներից, այլև ավելի ու ավելի բացահայտ հակվում է դեպի թուրքական ամեն ինչը, և իր արևելյան մեծաքանակ քլիպներում մեծ եռանդով տարփողում է թուրքական մելոսն ու թուրքական բնության գեղեցկությունները:

Զայրացած Ալլեգրովան, նույն ինքը՝ Սարգիսովան, միաժամանակ հետաքրքրվեց նաև, թե այդ ի՞նչ կերպ է հայ հորից և հրեա մորից ծնվել բուլղար-որդի, որպիսին իրեն ներկայացնում է Ֆիլիպ Բեդրոսովիչը:

Շնորհանդես-խնջույքին (որ աստիճանաբար վերածվեց սկանդալի) ներկա ռուսական էստրադայի աստղերը և երևելի հյուրերը ողջամիտ չեզոքություն պահպանեցին, գտնելով, որ երբ վիճում են հայերը, ավելի լավ է՝ չխառնվել:

Դենիս ՁԱԽԱՐՅԱՆ
"Новое время",

Այս հաղորդագրությունը կարդալուց անմիջապես հետո առաջին ցանկությունը եղավ «էքստրա» խմել Իրինա Ալլեգրովայի տղամարդ կենացը: Որովհետև վերջապես գտնվեց մեկը, որ հրապարակավ պրն Կիրկորովին հիշեցրեց ոչ միայն իր արմատների, այլև, որ ամենակարևորն է, փորձեց հասկանալ՝ ամեն թուրքականի նկատմամբ Ֆիլիպի բուռն սիրո պատճառը:

Մեզ հայտնի չէ, թե երգիչը ինչ է պատասխանել Ալլեգրովային, ինչո՞վ է բացատրել իր անզուսպ սիրահարվածությունը թուրքական մեղեդիներին ու թուրքականին: Եվ, ընդհանրապես, պատասխանե՞լ է արդյոք կամ ի՞նչ պիտի պատասխաներ այս ճշմարիտ մեղադրանքին:

Հանրահայտ ճշմարտություն է, որ նշանավոր անհատականությունները, գիտնականները, զորավարները, երաժիշտները, սպորտսմենները, արտիստները, ուր էլ որ լինեն, որտեղ էլ ապրեն ու գործեն, բարձրացնում են իրենց ժողովրդի վարկն ու համարումը, և անպայման նրանց փառքի, ճանաչման լուսապսակից բաժին է հասնում նրանց հայրենակիցներին: Եվ այդ «շողքը» դրական էմոցիաներ է հարուցում այլազգիների մեջ՝ նրանց ժողովրդի նկատմամբ:

Մենք կարող ենք բազում-բազում անուններ հիշել ու վկայակոչել, որոնք ոչ միայն պատիվ ու համբավ են բերել մեր ժողովրդին, այլև նրանց հայրենակիցը լինելու փաստն իսկ միշտ օգտակար է եղել օտարների հետ մեր հարաբերություններում: Մենք ամենևին էլ այն կարծիքին չենք, թե Ֆիլիպ Կիրկորովի հայ լինելու հանգամանքը, սույն իրողության ընդունումը նրա կողմից փառք ու պատիվ է հայ ժողովրդի համար, և այդ պարագան ինչ-որ բան կավելացնի մեր ժողովրդի նկարագրին ու կերտվածքին: Ուզո՞ւմ է Կիրկորովը ուրանալ իր արմատները՝ գլուխը քարը, թող ուրանա, դա իր խղճի ու մարդկային կերպի գործն է:

Սակայն էստրադայի աստղի նրա համբավը, մեծ ժողովրդականությունն ու ճանաչումը և մանավանդ երիտասարդության կրքոտ սերը նրա նկատմամբ անկասկած կարող էին օգտակար լինել այն բազմաթիվ հայերի համար, որոնք տուն-տեղ թողած, հացի խնդիր են լուծում անծայր Ռուսաստանի քաղաքներում: Եվ գուցե թե երբեմն էլ հայի նկատմամբ վերաբերմունքը հանկարծ փոխվեր, երբ դիմացինը հիշեր, որ ձեռք է բարձրացնում իր սիրելի երգչի և պաշտելի կուռքի հայրենակցի վրա:

Բայց Կիրկորովին անծանոթ են այսպիսի մտածմունքները: Եվ նա ոչ միայն չի ուզում օգտակար լինել իրեն ծնող ժողովրդին, այլև որդեգրել է մի ճանապարհ, որը ուղղված է իր իսկ նախնիների, իր արմատների դեմ: Բացատրենք: Թուրքական մելոսի, թուրքականի և թուրքական բնաշխարհի անզուսպ գովքն ու պրոպագանդան ռուսական բազմամիլիոնանոց լսարանում անպայման դրական երևույթ է թուրքերի համար: Քանի որ դեպի լավն է փոխում ռուսների վերաբերմունքը մեր դարավոր թշնամու նկատմամբ, այն ցեղի, որին չսիրելու հիմնավոր պատճառներ ունի նաև ռուս մարդը: Չէ՞ որ ռուսների տարածված հայհոյանքներից մեկն էլ «բասուրմանն է», որ անշուշտ, նշանակում է՝ թուրք: Եվ կամ մի՞թե թուրքին սիրելու հիմքեր ունի բուլղարացին (Կիրկորովը իրեն համարում է բուլղար): Մեր ազգերի ճակատագրերի նմանությունը չէր արդյո՞ք, որ Յավորովը գրեց հակաթուրքական իր «Հայերը» հռչակավոր ոտանավորը, իսկ Անդրանիկը հռչակվեց նաև բուլղարացիների ազգային հերոսը:

Այնպես որ, սիրելի ընթերցող, պրն Ֆիլիպի մոլի թուրքասիրությունը ինչ-որ կերպ բացատրելը գրեթե անհնարին գործ է: Կամ թուրքերը նրան էլ են գնել (ինչպես սովոր են անել)՝ հոգուտ թուրքերի պրոպագանդա տանելու ու իրենց ցեղի վարկը բարձրացնելու համար, կամ կա մեկ ուրիշ, ավելի լուրջ պատճառ, որի մասին Ֆիլիպ Կիրկորովը լռում է... Դե կան բաներ, որոնց մասին չի կարելի գոռալ, դա էլ հո «Սերը» չէ, որ բեմահարթակից ու էկրանից, ի լուր աշխարհի՝ ձեռքը մեկնել դեպի սիրելի «մայրիկն» ու գոռալ. սիրո՜ւմ եմ, սիրո՜ւմ եմ, սի-րո՜ւմ... Դե դա արդեն պաթոլոգիայի բնագավառն է:

Խմբագրություն

ՈՒՐԱԽԱՆԱ՞ՆՔ, ԹԵ՝ ՍԱՐՍԱՓԵ՞ՆՔ

ԿՈՄՊՅՈՒՏԵՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ. ԴԱ ԿԼԻՆԻ 30 ՏԱՐԻ ՀԵՏՈ.

Վերջին տասնամյակներում ֆուտուրոլոգիան կեղծ գիտությունից դարձել է գիտության ամենահեռանկարային ուղղություններից մեկը: Վերջերս ամերիկյան նշանավոր ֆուտուրոլոգ Պիրսոնը հրապարակեց առաջիկա 30 տարում մարդկային քաղաքակրթության զարգացման իր կանխատեսումները: Կանխատեսումները կատարված են ամենաճշգրիտ հաշվարկներով: Գիտնականը հաշվարկներում նշում է մոտ 500 իրականանալիք իրադրությունների ճիշտ ժամկետը: Ահա դրանցից մի քանիսը. 2007 թվականին մարդանման ռոբոտները արդեն կկարողանան մարդկանց փոխարինել արտադրության մեջ, իսկ 2015 թվականին տնային գործերում և հիվանդանոցներում:

2010 թվականին շոու-բիզնեսի յուրաքանչյուր 4-րդ աստղը կլինի վիրտուալ, այսինքն գոյություն կունենա միայն որպես կոմպյուտերային կերպար:

2006 թվականին ինտերակտիվ խաղալիքները ի վիճակի կլինեն էմոցիոնալ հաղորդակցության մեջ մտնել երեխաների հետ: Այսինքն, նայած իրադրության, նրանք «կկարողանան» ուրախանալ, հաճույք ապրել, ամաչել, զայրանալ, ծիծաղել և այլն:

2011 թվականը կդառնա արմատական բեկման տարի: Այդ ժամանակից կոմպյուտերային ծրագրերը կգրվեն մեքենաների կողմից: Այլ խոսքով, կգա այն պահը, երբ արհեստական բանականությունը կկարողանա վերարտադրել ինքն իրեն և անգամ ստեղծել իր քաղաքակրթությունը: 2018 թվականի արհեստական ինտելեկտը կստանա առաջին Նոբելյան մրցանակը, իսկ 2020 թվականին կյանքի էլեկտրոնային դրսևորումները կստանան մարդուն հավասար սահմանադրական իրավունքներ:

2025 թվականին զարգացած երկրներում կլինեն ավելի շատ ռոբոտներ, քան մարդիկ: 2030 թվականից հետո ռոբոտները իրենց ստեղծողներին կգերազանցեն ինչպես ֆիզիկական, այնպես էլ մտավոր տեսակետից, և թերևս, այլևս չուզենան հանդուրժել մարդկային կամքի թելադրանքը:

2015 թվականին ուղևորությունները տիեզերք կլինեն սովորական զբոսանք, իսկ ուղեծրում կկառուցվի առաջին տիեզերական հյուրանոցը:

2030 թվականին վերջապես կմշակվի անաբիոզի (երկարատև քուն մտնելու) տեխնոլոգիան, դրա շնորհիվ հնարավոր կդառնան մարդկանց կանոնավոր թռիչքները դեպի այլ մոլորակներ, այդ թվում՝ նաև Արեգակնային համակարգությունից հեռու:

Իհարկե, այս կանխատեսումներից շատերը թվում են ֆանտաստիկ և անիրականանալի: Սակայն Պիրսոնի 1991 թվականին արած կանխատեսումների 85 տոկոսը անցած տարիներին դարձել են իրականություն:

Ուրախանա՞նք, թե՝ սարսափե՞նք:



Ֆրանսիական հյուսիսը, Լամանշի ծովեզերքը

ԱՌԱՋԻՆԸ ՀԵՌԱՎՈՐ ԱՍՏՂԵՐ ԿԹՌՉԵՆ... ԿԱՆԱՅՔ

Ամերիկյան ՆԱՍԱ տիեզերական գործակալությունը ծրագրում է իր աստղագնացներին ուղարկել դեպի ամենամերձավոր աստղը՝ Ալֆա Կենտավրոս: Մինչև այդ աստղը 4,3 լուսային տարի է: Ներկայիս տիեզերանավերը այդ տարածությունը կարող են անցնել մոտավորապես 400.000 տարում: Սակայն ամերիկյան ինժեներները մշակում են սկզբունքորեն նոր տիեզերանավ: Այդ աստղանավերը պետք է արագություն հավաքեն ադամանդե թաղանթից պատրաստված առագաստների օգնությամբ, որոնց վրա պետք է ներազդի գերհզոր լազերը: Այդ եղանակով շարժվող աստղանավը կարող է շարժվել վայրկյանում 30 հազար կիլոմետր արագությամբ: Դա կազմում է լուսային արագության մեկ տասներորդը: Սակայն անգամ այդ արագության պայմաններում ճանապարհորդությունը դեպի Ալֆա Կենտավրոս աստղը կպահանջի 200 տարի: Այդ 200-ից 100 տարին կպահանջվի աստղանավի շարժիչի արգելակման համար: Այնպես որ աստղ կհասնեն աստղագնացների ծոռները միայն:

Մասնագետների կարծիքով նման թռիչքը հնարավոր կլինի առաջիկա 50 տարում, և դեպի աստղ կթռչեն միայն կանայք: Ինչ վերաբերում է աստղանավում երեխաներ ունենալուն, ապա միակ միջոցը արհեստական բեղմնավորումն է:

ԱՅՐՎՈՂ ՍԱՌՅԱԼԵՌՆԵՐ

Ճապոնացի գիտնականները հայտնաբերել են վառելիքի նոր տեսակ՝ այսպես կոչված «այրվող սառույց»: Այն գտնվում է հավերժական սառածության խորքերում՝ Սառուցյալ օվկիանոսի հատակում: «Այրվող սառույցը» բնական մեթան գազն է՝ սառած վիճակում: Դրանց պաշարները չափազանց մեծ են և ավանդական վառելիքային պաշարների ու գազի սպառման վտանգի դեպքում, կարող են ծառայել մարդկային քաղաքակրթությանը:



Ճամփաներ... ճամփաներ...

ԾԱՆՐԱԿՇԻՌ ՆԵՐԴՐՈՒՄ ՀԱՅ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Լույս է տեսել ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, հանրապետությունում տնտեսագիտական ժողովրդագրության հիմնադիրներից մեկի, անվանի տնտեսագետ, պրոֆեսոր Վ.Խոջաբեկյանի «Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX - XX դարերում, XXI դարի շեմին» ստվարածավալ մենագրությունը (ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Ե., 2002, 522 էջ):

Մենագրությունը տպագրության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ: Աշխատությանը կցված են ռուսերեն և անգլերեն ծավալուն ամփոփումներ:

Հայ տնտեսագետների ուշադրության կենտրոնում մշտապես եղել են բնակչության վերարտադրության, նրա զանգվածային տեղաշարժերը, աշխատանքային ռեսուրսների օգտագործման և ժողովրդագրության հիմնախնդիրները: Առանձնակի նշանակություն են ունեցել բնակչության թվաքանակի, աշխատանքային ռեսուրսների գիտական կանխատեսման հարցերը մեր երկրի արտադրողական ուժերի տեղաբաշխման և սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական ուղղությունները որոշելիս: Հայտնի է, որ այդ գիտական խնդիրների հղացումը ունեցել է կիրառական նշանակություն և հզոր սոցիալական հնչեղություն: Հայաստանում արդյունավետորեն իրականացվող պրոբլեմի գիտական ուսումնասիրությունների բնագավառում յուրովի առանձնանում է ակադեմիկոս Վ.Խոջաբեկյանի բուռն, նպատակասլաց և մշտական գիտական, կազմակերպչական գործունեությունը: Գրախոսվող մենագրությունը նրա այդ գործունեության արգասիքն է:

Հեղինակը անգնահատելի ավանդ ունի Հայաստանում բնակչության վերարտադրության, տեղաշարժերի, աշխատանքային ռեսուրսների օգտագործման տնտեսագիտական ժողովրդագրության պրոբլեմների գիտական մշակման գործում, որոնք արժանի ճանաչում են բերել նրան թե մեզ մոտ և թե արտասահմանյան մի շարք երկրներում:

Հեղինակի կողմից ընտրած ժամանակահատվածը (19-20-րդ դդ.) բնորոշվում է հայ ժողովրդի պատմական ընթացքի բուռն դրսևորումներով, որոնք արտահայտվում են մեր երկրի հասարակական-քաղաքական կյանքի, սոցիալ-տնտեսական զարգացման կտրուկ շրջադարձերով: Այդ ժամանակաշրջանում հայ ժողովուրդը մեծ առաջընթաց ապրեց, ձեռք բերեց ակնառու նվաճումներ, ինչպես նաև կրեց անդառնալի կորուստներ՝ ցեղասպանությունը, Հայաստանի առաջին հանրապետության ստեղծումը, սոցիալիտական Հայաստանի հռչակումը, նրա 70-ամյա աննախադեպ զարգացումը, ինչպես նաև հետագա պատմական կարևոր իրողությունները՝ Սումգայիթյան ոճիրը, Սպիտակի երկրաշարժը, Արցախի ազատագրումը, ԽՍՀՄ փլուզումը և Հայաստանի անկախացումը իրենց խորը կնիքն են թողել Հայաստանի բնակչության վերարտադրության, տեղաշարժերի և ժողովրդագրության գործընթացների վրա:

Արժանին մատուցելով պրոֆ. Վ.Խոջաբեկյանին, նշենք, որ հեղինակը հիմք ընդունելով վերը նշված հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական երևույթները և պատմական զարգացման շրջադարձերը, գիտական բարձր մակարդակով և պատմա-տնտեսագիտական բազմակողմանի և խորը վերլուծություններով առաջին անգամ հայ տնտեսագիտական գրականության մեջ ընդգրկուն համալիր ձևով մեկնաբանել է Հայաստանի բնակչության երկդարյա զարգացումը, տեղաբաշխումը և տեղաշարժերը, զանգվածային ներգաղթը և արտագաղթը, ժողովրդագրության հիմնախնդիրները (ծննդաբերություն և նրա անկման պատճառները, մահացությունը, բնակչության զբաղվածությունը, նյութական արտադրությունը, նրա համահավաքը, արտագաղթը և այլն):

Մենագրության յոթ բաժիններում, որոնք ընդգրկում են 22 գլուխներ, հեղինակը ներկայացնում է Հայաստանի բնակչության վերարտադրության և ժողովրդագրության հիմնախնդիրները՝ սկսած ներգաղթից, ընդհուպ մեր օրերի սոցիալական չարիքը՝ արտագաղթը, նրա քննական վերլուծությունը և մեկնաբանումը:

Մենագրության մեջ հեղինակը գիտական շրջանառության մեջ է դրել վիճակագրական, արխիվային հարուստ նյութեր, քաղված անցյալ դարերում հրատարակված պարբերականներից, առանձին հեղինակների աշխատություններից և զանազան գերատեսչական տեղեկատուներից, որոնք նոր լույս են սփռում Հայաստանի բնակչության վերարտադրության, տեղաշարժերի և ժողովրդագրության կնճռոտ հարցերի պարզաբանման վրա: Հեղինակը մանրազնին, բազմակողմանի քննական վերլուծության է ենթարկել առ այսօր անցկացված բոլոր մարդահամարների նյութերը, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության հրատարակած տեղեկանքները:

Հայ ժողովրդի անցյալ դարերի բնակչության աճի, վերարտադրության, տեղաշարժերի և ժողովրդագրության խնդիրները իրենց վրա են բևեռել ինչպես օտար, այնպես էլ հայ տնտեսագետների և պատմաբանների սևեռուն ուշադրությունը, որի հետևանքով ստեղծվել է պատմա-տնտեսագիտական հարուստ գրականություն: Ամենևին ստվեր չգցելով հանրահայտ հեղինակների գիտական ժառանգության վրա՝ նշենք, որ պրոֆ. Վ.Խոջաբեկյանի մենագրությունը ուսումնասիրության ժամանակահատվածի հարցադրումների նորությամբ, բնակչության վերարտադրության և ժողովրդարարության խնդիրների քննարկման համակողմանի և ընդգրկուն առումով, տեսական-մեթոդական և գործնական զինանոցի հմուտ օգտագործմամբ բացառիկ ուսումնասիրություն է: Առանց վարանելու կարող ենք նշել, որ նման մենագրություն հայ տնտեսագիտական գրականության մեջ վերջին հարյուր տարում հրատարակվել է առաջին անգամ, որտեղ ի մի է բերված անվանի գիտնականի ավելի քան քառասունամյա տքնաջան բեղմնավոր, ազգանվեր գործունեությունը: Այդ գիրքը ծանրակշիռ ներդրում է հայ տնտեսագիտության մեջ:

Մենագրությունը ուրույն կառուցվածք ունի, որտեղ հեղինակը հետևողականորեն բացահայտել է Հայաստանի բնակչության վերարտադրության տեղաշարժերի և ժողովրդագրության առանցքային բազմակողմանի հիմնահարցերը՝ դիալեկտիկական մոտեցմամբ և տրամաբանորեն փոխկապակցված: Վերլուծական հզոր մտքով, շարադրման հստակ ոճով և պարզ, դյուրընկալ ձևով, ճշգրտորեն ներկայացվում և մեկնաբանվում են Արևելյան Հայաստանի բնակչությունը և նրա զբաղվածությունը XIX դարում, բնակչության համահավաքը XX դարում, ժողովրդագրական լարվածությունը արդի փուլում, գաղթը և բնակչության թվաքանակի նվազումը, երկրի առաջընթացը և արտագաղթը մեղմելու պայմաններն ապագայում և բնակչության զարգացման միտումները երրորդ հազարամյակի սեմին:

Առանձնակի ուշադրություն են գրավում այնպիսի բարդ և հակասական հարցերի քննարկումը, ինչպիսիք են արտադրահարաբերությունների զարգացումը ամբողջությամբ վերցրած Անդրկովկասում, Արևմտյան և Արևելյան Հայաստանում, սոցիալ տնտեսական, քաղաքական կացությունը, տնտեսական, պատմական զարգացման վայրիվերումները և հայ բնակչության զբաղվածության ձևավորումը՝ ֆաբրիկագործարանային արտադրության խանձարուրից մինչև մեր օրերը:

Լայն, ընդգրկուն պատասխան է տրված բնակչության ընդլայնված վերարտադրության և ժողովրդագրության այնպիսի հիմնարար հարցերին, ինչպիսիք են ծննդաբերությունը և մահացությունը: Հանգամանորեն բացահայտված են բնակչության աճի պայմանները և մահացության պատճառները՝ կապված բազմաթիվ գործոնների հետ:

Անվանի գիտնականը մերկացնում է Ադրբեջանի հայաջինջ քաղաքականությունը 1918 - 1920թթ., նորօրյա հորդաների մարդատյացությունը և գազանային ջարդերը Սումգայիթում և Բաքվում: Ընթերցելով մենագրության այդ էջերը՝ վերապրում ես այն տարիների ցավն ու մորմոքը, տրամաբանական կապ տեսնում 1915թ. թուրքական ցեղասպանության հետ: Հայ մտավորականին վայել ազնիվ կեցվածքով հեղինակը բացահայտում է ադրբեջանցիների վայ «ժողովրդագետների» ստահոդ կեղծիքները, այսպես կոչված «մեկ միլիոն անտուն վրաններում միգրանտների» մասին հեքիաթը: Նա ցույց է տալիս, որ դա մոգոնված թիվ է: ԼՂ-ից, շրջակա տարածքներից և Հայաստանից արտագաղթած ադրբեջանցիների թիվը իրականում կազմել է կես միլիոնից փոքր-ինչ ավելի: Մեկ միլիոնի մասին հորինվածքը Ադրբեջանի ղեկավարները անընդհատ հոլովում են բոլոր կարգի հանդիպումների և բանակցությունների ժամանակ:

Առանձնահատուկ ուշադրություն է նվիրվել XXI դարում ժողովրդադրական միտումների բացահայտման հարցերին:

Ապագայում ժողովրդագրության քաղաքականության մշակման հետ միասին հանգամանորեն քննարկվում են XXI դարի մինչև 50-60-ական թվականները բնակչության ծննդի և մահվան, աշխատանքային և թոշակային տարիք թևակոխողների թվի ելևէջները, աշխատանքային ռեսուրսների կազմավորման և զբաղվածության ուղիները, ապագայում աշխատուժի առաջարկի ու պահանջարկի հարաբերակցությունը, աշխատանքային շուկայի բազմաբնույթ փոփոխությունների հարցերը: Ապագա գործընթացները քննարկելիս պրոֆ. Խոջաբեկյանը ուշի-ուշով հետևում է բնակչության տարիքային կազմի փոփոխություններին, հատկապես բնակչության ծերացմանը, որ տեղի կունենա XXI դարի ընթացքում, ինչպես նաև ներգաղթի և արտագաղթի միտումների բացահայտմանը, որոնք հիմնավորվում են իրական հարցադրումներով, լուծումներով և հետևություններով: Առաջին պլան է մղվում արտագաղթը պետական մակարդակով կառավարելու և ներգաղթին կազմակերպված բնույթ տալու հարցերին:

(Շարունակությունը՝ 8-րդ էջում)

ԱՅԼՄՈԼՈՐԱԿԱՅԻՆՆԵՐԻ ԴԱՎԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ.

ԵՎՍ ՄԻ ՎԱՐԿԱԾ ՔԵՆԵԴՈՒ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(Սկիզբը՝ N5-ում)

... Եթե ԱՄՆ-ի կենտրոնական հետախուզական վարչությունը իսկապես մասնակից է Ջոն Քենեդու սպանությանը, ապա տրամաբանական հարց է ծագում՝ ո՞ւմ կամքն էր կատարում նա: Այս թեման հոլովող հեղինակների մեծ մասը հանգում են այն հետևության, որ պրեզիդենտի սպանության և դրան հաջորդած տարօրինակ մահերի ետևում կանգնած են գաղտնի ուժեր, որոնք փորձում են ուղղություն տալ և ղեկավարել մարդկության գիտատեխնիկական առաջընթացը: Այս ամենը հնչում է անհավանական ու ֆանտաստիկ, եթե մոռանանք մեր անցյալ պատմությունը:

Գաղտնիք չէ, որ զանազան գաղտնի կազմակերպություններ, ինչ-որ «ընտրանի» անձանց կաստաներ, որոնք խնամքով թաքցնում էին իրենց իմացությունները, գոյություն են ունեցել բոլոր ժամանակներում: Սրանք իրենց գիտելիքներով միշտ առաջ էին ընկած սովորական մահկանացուներից, և դրա հետևանքով մեր մոլորակի վրա միշտ էլ գոյություն է ունեցել երկու կարգի գիտություն՝ մենաշնորհային և «լայն սպառման»: Ըստ որում մասսայական գիտության և տեխնիկայի հետ մնալը որոշ հաշվարկներով կազմում է 30-ից 80 տարի:

Այսպես, կա բավականին հիմնավորված ենթադրություն, որ ռադիոն գաղտնի ընկերություններին հայտնի է եղել դեռ Պուշկինի ժամանակներից, այսինքն՝ Պոպովի և Մարկոնիի գյուտերից 60 տարի առաջ: Կա վարկած, որ հակագրավիտացիոն շարժիչները, որոնց մշակմանը նորնոր ձեռնարկում են, հայտնի են եղել դեռ անցյալ դարավերջին: Եթե սա ճշմարիտ է, ապա բնական բացատրություն են ստանում 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի բազմաթիվ վկայություններ տարօրինակ թռչող սարքերի մասին, որոնց մեջ եղել են մարդիկ:

Նոր տեխնոլոգիաները թաքցնելու ֆինանսական աստառը ակնհայտ է՝ փող են սարքում այն ապրանքով, որը մշտապես վաճառվում է: Այսպես, էլեկտրասարքավորումներ արտադրող կոմպանիաներից մեկը գնել և «սառեցրել» է անցյալ դարավերջի «հավերժական» էլեկտրական լամպի գյուտի արտոնագիրը: Ասում են, որ դրանցից երեքը մինչև օրս վառվում են ամերիկյան հրշեջ մասերից մեկում: ըստ երևույթին, նույն շարժառիթներով իսպառ թաքցվել է ամեն տեղեկատվություն հանճարեղ Նիկոլ Թեսլիի հայտնագործության մասին: Նրա ստեղծած «Ամուր վիճակի կոնվերտորը» տիեզերական էներգիան վեր էր ածում էլեկտրականության: Փոքրիկ ծմերուկի մեծության հարմարանքը փորձարկվեց մի ամբողջ շաբաթ (1931թ.), անվճար էլեկտրաէներգիայով սնուցելով ժամում 130կմ/ժ արագությամբ ընթացող ավտոմեքենայի էլեկտրաշարժիչը:

Ընդունեք, որ նավթ արդյունահանող և էլեկտրաէներգիա արտադրող ընկերությունները անհանգստանալու պատճառ ունեին:

Տրամաբանական է ենթադրել, որ գիտատեխնիկական հայտնագործությունները «սառեցնող» գաղտնի ընկերությունները դրա համար ունեն այլ պատճառներ: Չէ՞ որ վաղնջական ժամանակներից կարևորագույն և նվիրական իմացություններ ու գիտելիքներ պարունակող ձեռագրերն ու գրքերը հետևողականորեն շրջանառությունից հանողների մեծ մասը այդ բանը անում էր մարդասիրական մղումներով: Չէ՞ որ եթե որոշ գյուտեր ու հայտնագործություններ ընկնեն հանցագործների կամ հոգեկան խանգարում ունեցող մարդկանց ձեռքը սպառնալիք կդառնան մարդկության համար:

Օրինակի համար դժվար չէ պատկերացնել, թե ինչ պատուհաս կսպառնար մարդկությանը, եթե ահաբեկիչների սեփականությունը դառնար ականավոր մտածող ու գիտնական Մ.Ֆիլիպովի հանճարեղ հայտնագործությունը: Իր նամակներից մեկում նա գրել է. «Ես կարող եմ կարճ ռադիոալիքների փնջով վերարտադրել պայթյունի ողջ ուժը: Պայթյունի ալիքը ամբողջությամբ փոխանցվում է էլեկտրամագնիսական տանող ալիքի երկայնքով և այդ կերպ Մոսկվայում պայթեցված դինամիտի լիցքը իր ազդեցությունը կարող է հաղորդել Կոստանդնուպոլսում: Իմ կատարած փորձարկումները ցույց են տալիս, որ այս ֆենոմենը կարելի է իրագործել մի քանի հազար կիլոմետր հեռավորության վրա»: 1903 թվականին, այս արտասովոր անհատականությունը, 45 տարեկան հասակում սպանվեց իր լաբորատորիայում: Ինչո՞ւ, գուշակելը դժվար չէ: Ո՞ւմ կողմից՝ պատմությունը լռում է...

Միավորվա՞ծ են արդյոք գաղտնիքների այս պահապանները մեկ կազմակերպության մեջ: Հազիվ թե: Որովհետև հին ժամանակներից մինչև մեր օրերը այս փակ ու գաղտնի ընկերությունների միջև գոյություն է ունեցել անհաշտ մրցակցություն: Բայց միավորման ձգտում, անշուշտ, եղել է: Մարդկային պատմության անդրկուլիսյան զսպանակների նշանավոր հետազոտող Դեվիդ Արկի կարծիքով, մենք այսօր կարող ենք արդեն խոսել բավական հզոր մի գաղտնի կազմակերպության գոյության մասին, որն ի վիճակի է լրջորեն ներգործել մարդկության կյանքի տարբեր կողմերի վրա: Այս կառույցը ամենակարող չէ (զի կան հակակշիռ նման կազմակերպություններ), սակայն նկրտումները անհագուրդ են՝ առնվազն դառնալ համաշխարհային կառավարություն: Այս կառավարության հիմքերը ուրվագծվեցին մեր դարասկզբին՝ Մեծ Բրիտանիայի և Միացյալ Նահանգների «ընտրյալների» կառույցները 1919 թվականին միավորվեցին «Կլոր սեղան» անվան տակ: Այսբերգի տեսանելի մասը մշուշապատ Ալբիոնում Արտաքին գործերի թագավորական ինստիտուտն էր, իսկ Միացյալ Նահանգներում՝ Միջազգային հարաբերությունների խորհուրդը: Այդ ժամանակներից (1921 թվական) ԱՄՆ-ի պրեզիդենտ կարող էր դառնալ միայն «ընտրյալը»՝ այս խորհրդի անդամը: Միակ բացառությունը եղավ Ջոն Քենեդին և դա, հավանաբար, կանխորոշեց նրա ողբերգական ճակատագիրը:

1954 թվականին համաշխարհային քաղաքական, ֆինանսական, արդյունաբերական և ռազմական վերնախավի միավորումը հանգեցրեց «գաղտնի կառավարության» հաջորդ սերնդի ստեղծմանը, որը հայտնի էր «Բիլդերբերգյան խումբ» անունով, իսկ 1973-ին այն վերափոխվեց «Եռակողմյան Հանձնաժողովի», որը խնդիր ուներ ապահովել ԱՄՆ-ի, Եվրոպայի և Ճապոնիայի համապարփակ հսկողությունը ամբողջ մոլորակի վրա: Դեվիդ Արկը գտնում է, որ այս բուրգի վերևում գտնվող «Ընտրանին» (որը ավելի բարձր է ու հզոր, քան ցանկացած կառավարություն), այսօր արդեն ի զորու է անել այնպես, որ տարբեր երկրներում իշխանության գան իրենց ուզած ուժերը:

Ամերիկյան հետազոտող Բոբ Ֆրիսելին գտնում է, որ այդ գաղտնի կառավարության մեջ գլխավորապես մտնում են մոլորակի ամենահարուստ մարդիկ, որոնք էլ որոշում են աշխարհի և մարդկության ճակատագիրը:

Գաղտնի կառավարության գլխավոր խնդիրներից մեկը գիտատեխնիկական առաջընթացի կառավարումն է, որը հնարավորություն է տալիս ավելի արդյունավետ ղեկավարել «մարդկային նյութը»: Սրանք անչափ շահագրգռված են դառնալ էլիտար իմացությունների, գիտության և բարձր տեխնոլոգիաների մենաշնորհը: Հանկարծ ընդհատվում են խոստումնալից և հեռանկարային հետազոտությունները, ասպարեզից անհետ կորչում են տաղանդավոր գիտնականները, նրանց ուսումնասիրությունները չքանում են գրադարաններից, նրանց անունները անհետանում են կատալոգներից և գիտական տեղեկատուներից: Որտե՞ղ և ո՞ւմ համար են աշխատում նրանք...

Ասում են, թե գոյություն ունի գիտական և տեխնիկական բնագավառների մի ամբողջ ցանկ, որոնց մասին տեղեկատվությունը խստագույն տաբուի (արգելքի) տակ է: Ահա դրանցից մի քանիսը միայն. «հոգեբանական օպտիկա», քիմիական տարրերի տրանսմուտացիա սովորական ջերմաստիճանում (միջուկային սառը սինթեզ, ալքիմա), էներգիայի անթել հաղորդում տարածության վրա, հակագրավիտացիա, տարածության կառավարում ժամանակի միջոցով, գենային ինժեներիայի (մասնավորապես մտավոր ներգործություն տարածության վրա) և այլն, և այլն: Պնդում են, որ այդ ցանկը, որ կազմել են ֆրանսիացի բարձրաստիճան զինվորականները, ընդգրկում է մոտավորապես 800 նման բնագավառ և ուղղություն:

Դրանց թվում է նաև տեղեկատվությունը չճանաչված թռչող օբյեկտների մասին: Երկրի ֆիզիկայի ամերիկացի նշանավոր մասնագետ Գորդոն-Մայքլ Սկալլիոն, որ երկար տարիներ զբաղվում է ՉԹՕ-ների առեղծվածով, համոզված է, որ այսօր գրանցվող «թռչող ափսեների» կեսից ավելին պատկանում է երկրի մարդկանց, իսկ ավելի ստույգ՝ գաղտնի կառավարությանը, որն արդեն յուրացրել է և տիրապետում է այլմոլորակային մի շարք տեխնոլոգիաների:

Գաղտնի ընկերությունների պատմությունն ուսումնասիրող հետազոտողները պնդում են, որ դրանցից մի քանիսը երկար ժամանակ միջնորդի դեր են կատարել մարդկության և արտերկրային քաղաքակրթությունների միջև: Եթե սա ճիշտ է, ապա հասկանալի են այն գերճիգերը, որով մինչև վերջերս թաքցվում էր տեղեկատվությունը գաղտնի կառավարության և այլմոլորակայինների կապերի մասին: Պնդում են, որ տրամադրված բազաների և մեր մոլորակի վրա փորձեր կատարելու թույլտվության համար այդ կառավարությանը այլմոլորակայինները հատկացրել են մի շարք տեխնոլոգիաներ, որոնք օգնում են «կառավարության» աշխարհը տիրելու նկրտումներին:

Բացառված չէ, որ գաղտնի կառավարության շատ անդամներ անկեղծ հավատում են, որ թաքցնելով ճշմարտությունը, նրանք փրկում են մարդկությանը: Սակայն «Զարհուրելի է և ծիծաղելի այն փաստը, որ նրանք հարկադրված են իրենց դաշնակից ընտրել այլմոլորակայինների ռասան, որն այսօր ստիպված է մեծագույն ճիգերով պայքարել իր գոյության պահպանման համար» (Ուիլյամ Կոպեր):

Եվ վերջապես, ճշմարտությունը թաքցնելու մեթոդների մասին: Ինչպես երևում է, աներևույթ կառավարությունը գործում է «նպատակն արդարացնում է միջոցները» կարգախոսով: Վերջերս արևմտյան մամուլում հրատարակվեց մի քանի տասնյակ հայտնի գիտնականների և բարձրաստիճան զինվորականների անուններ, որոնք վեց տարվա ընթացքում, խորհրդավոր հանգամանքներում հրաժեշտ տվեցին կյանքին, իսկ նրանց մահվան բուն պատճառները այդպես էլ մնացին հանելուկ: Այդ գիտնականները երկար ժամանակ աշխատում էին «Աստղային պատերազմների» նախագծին նմանատիպ ոլորտում: Նրանց հետազոտությունների ուղղությունը էլեկտրոնային զենքի տարբեր հայեցակետերն էին, և բոլորն էլ իրենց հետազոտությունների ընթացքում զբաղվում էին ՉԹՕ-ների ուսումնասիրությամբ:

Զուգադիպությո՞ւն է: Դժվար թե: Անկասկած, այդ բազմաթիվ առեղծվածային սպանությունների ցանկում պետք է ավելացնել նաև ԱՄՆ-ի պրեզիդենտ Ջոն Քենեդու անունը:

Ուիլյամ Կոպերը միանշանակ պնդում է. «Ջոն Քենեդու սպանության մասին որոշումը ընդունվել է Բիլդերբերգյան խմբի քաղաքական կոմիտեի կողմից, իսկ «դատավճիռը» ի կատար ածվեց Դալլասում՝ ԿՎՀ գործակալների կողմից»: – «Գաղտնի կառավարության հզորությունը այնքան անպարփակ է, – գրում է պրոֆեսոր Լուրենս Մերրիկը, որ Քենեդիից հետո՝ ամերիկյան ոչ մի պրեզիդենտ չի հանդգնում ամերիկյան ժողովրդին հայտնել ողջ ճշմարտությունը չճանաչված թռչող օբյեկտների մասին»: Պրոֆեսոր Մերրիկը կարծում էր և հույս ուներ, որ թերևս Բիլ Քլինթոնը վերջապես կարտասանի այն ճառը, որ պետք է հնչեր 1963 թվականին, Ջոն Քենեդու շուրթերից: Սակայն, ինչպես երևում է, պրոֆեսորի հույսերը անհիմն էին: Չէ՞ որ Բիլ Քլինթոնը միաժամանակ անդամ էր վերը հիշատակված բոլոր երեք գաղտնի կազմակերպությունների՝ Միջազգային հարաբերությունների խորհրդի, Եռակողմ հանձնաժողովի և Բիլդերբերգյան խմբի...

Վիտալի ՇԵԼԵՊՈՎ
Գնդապետ, տեխնիկական գիտությունների թեկնածու
(ըստ ամերիկյան մամուլի)

Ս. Գրիգոր Լուսավորիչ տաճարը Երևանում



ԲԱՑ ՆԱՄԱԿ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Մեծարգո պարոն Աբրահամյան.

Ռուսաստանի հայերի միության, Յունիբանկի և Ֆինանկո վերլուծական ընկերության կողմից հայտարարված՝ «Լավագույն ներդրումային նախագծերի» մրցույթին էր ներկայացվել ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի հանքահումքային ռեսուրսների բաժնի վարիչ, երկրաբանահանքաբանական գիտությունների դոկտոր՝ Հրաչիկ Սարգսի Ավագյանի կողմից մշակված երկու նախագիծ. «Հայաստանի Հանրապետության պեռլիտներից զտափոշիների արտադրության կազմակերպում» և «Հայաստանի Հանրապետության հանքային ջրերից լիթիում, ռուբիդիում և ցեզիում ալկալի մետաղների կորզում»: Նշված նախագծերը թերի լինելու պատճառաբանությամբ Յունիբանկի ֆոնդային կենտրոնի տնօրեն պարոն Գևորգյանը հետ էր վերադարձրել լրացնելու: Երկու անգամ լրացումներ կատարելուց և մեկ շաբաթ պ. Գևորգյանի մոտ մնալուց հետո նշված նախագծերը հետ վերադարձվեցին հեղինակին՝ տալով հետևյալ տեղեկանքը.

«Տրված է Հրաչիկ Սարգսի Ավագյանին, առ այն, որ իր կողմից ներկայացված «ՀՀ պեռլիտներից զտափոշիների արտադրության կազմակերպում» և «Հայաստանի Հանրապետության հանքային ջրերից լիթիում, ռուբիդիում և ցեզիում ալկալի մետաղների կորզում» նախագծերը ընդունվել են նախնական ուսումնասիրության համար և ետ են վերադարձվել հեղինակին նախագծերի ֆինանսական տեղեկությունները թերի լինելու պատճառով: Ուսումնասիրության ընթացքում ստացված տեղեկությունները օգտագործվել են միայն նախագծերի վերլուծության նպատակով և այլ նպատակով չեն օգտագործվելու»:

Պարոն Գևորգյանի և նախագծերի հեղինակի միջև տեղի ունեցած խոսակցությունների մանրամասները չենք հաղորդում, միայն Ձեզ ենք ուղարկում նշված նախագծերը և հայցում ենք ստանալ Ձեր հեղինակավոր կարծիքը, նախ.

– Նշված ծրագրերը ետ վերադարձնելու պատճառաբանության հիմնավորվածությունը, և, երկրորդը.

– Այդ ծրագրերի կարևորությունը ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ Ռուսաստանի հայ գործարարների համար:

Վ.Ե.ԽՈՋԱԲԵԿՅԱՆ
ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Մեծարգո պարոն Աբրահամյան,

Սույն թվականի հունիսի վերջին Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի փոխպրեզիդենտ, ակադեմիկոս պարոն է.Գաբրիելյանի ստորագրությամբ նամակ էր ստացվել ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում, որով՝ պարոն Գաբրիելյանը ԳԱԱ բոլոր ինստիտուտներին տեղեկացնում էր, որ «Ռուսաստանի հայերի Միությունը, Յունիբանկը և Ֆինանկո վերլուծական ընկերությունը հայտարարում են Հայաստանի լավագույն ներդրումային նախագծի մրցույթ...» և առաջարկում էր ՀՀ ԳԱԱ բոլոր աշխատակիցներին՝ ակտիվ մասնակցություն ցուցաբերել նշված մրցույթին:

Ես, Հ.Ս.Ավագյանս, քաջատեղյակ լինելով Հայաստանում հանքահումքային ռեսուրսների օգտագործման այժմյան վիճակին, ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս՝ Վ.Ե.Խոջաբեկյանի առաջարկությամբ համաձայնություն հայտնեցի մասնակցել նշված մրցույթին: ՀՀ ԳԱԱ Միջազգային կապերի վարչությունից ստանալով հայտ ներկայացնելու պահանջների և ձևերի մասին ինֆորմացիա, ձեռնամուխ եղա իմ մտահղացումների իրագործմանը՝ բիզնես պլանների կազմմանը:

Սույն թվականի հուլիսի 16-ին Յունիբանկի ֆոնդային կենտրոնի տնօրեն՝ պարոն Գ.Գևորգյանին ներկայացրեցի երկու բիզնես պլաններ «Հայաստանի Հանրապետության պեռլիտներից զտափոշիների արտադրության կազմակերպում» և «Հայաստանի Հանրապետության հանքային ջրերից լիթիում, Ռուբիդիում և ցեզիում ալկալի մետաղների կորզում» անվանումներով: Ասեմ, որ դրանից 4 օր առաջ ես եղել էի պարոն Գևորգյանի մոտ որոշակի հարցերի պարզաբանման նպատակով, այդ թվում նաև հարցով՝ «անհրաժե՞շտ է, որ բիզնես պլանները Յունիբանկի հասցեով փոխանցվեն էլեկտրոնային փոստով»: Ստանալով պարոն Գևորգյանի դրական պատասխանը ես հուլիսի 15-ին խնդրեցի մեր ինստիտուտի համակարգչային կենտրոնի տնօրենին փոխանցել նշված ծրագրերը: Եվ երբ հուլիսի 16-ին մեքենագրված ծրագրերով ներկայացա Յունիբանկ և հանդիպեցի պարոն Գևորգյանին, նա ինձ ասաց, որ իմ ծրագրերում «չեն վերլուծվել ֆինանսական հոսքերը»: Ես ասացի՝ «երկու ծրագրերում էլ հաշվարկված են արտադրական ծախսերը, արտադրանքների վաճառքից սպասվող հասույթները, ծրագրվող ձեռնարկությունների հաշվեկշռային շահույթները, էլ ի՞նչ է պետք»: «Եթե դուք չեք կարող դա անել մենք ձեզ կօգնենք, միայն այդ դեպքում ծրագրերը պետք է ներկայացնենք համատեղ»: Ես ամբողջությամբ հասկացա պարոն Գևորգյանի ասածը, հասկացա, որ նա ձգտում է դառնալ իմ նախագծերի (ծրագրերի) համահեղինակ և պատասխանեցի, որ «ես կարող եմ և վաղը ևեթ կբերեմ»: Եթե պարոն Գ.Գևորգյանը կարողանար վերլուծել, թե նշված ծրագրերի հեղինակը, իր երկրորդ ծրագրում «Հայաստանի Հանրապետության հանքային ջրերից լիթիում, ռուբիդիում և ցեզիում ալկալի մետաղների կորզում», թափանցելով ոչ իր մասնագիտության՝ քիմիայի բնագավառը, ինչպիսի հաշվարկներ է կարողացել կատարել (հանքային ջրերում նշված ալկալի մետաղների վիճակների և պարունակությունների վերաբերյալ), հավանաբար նշված պատճառաբանությունը «եթե դուք չեք կարող. մենք ձեզ կօգնենք...» և դրանից հետո եկող առաջարկությունը չէր անի: Ասեմ նաև այն, որ պարոն Գևորգյանը այդ նույն օրը նաև զգուշացրեց, որ ես ֆինանսական հոսքերը տամ նաև «Excel» աղյուսակների տեսքով և դրանք ներկայացնեմ նաև դիսկետով: Երբ պարոն Գևորգյանի պահանջները կատարեցի և հուլիսի 22-ին ներկայացա Յունիբանկ, ինձ ասացին, որ պ.Գևորգյանը քաղաքից բացակայում է և կանչեցին մի երիտասարդի, որը ներկայացավ Արման անունով: Վերջինս ինձ ասաց, որ «Գարիկը քաղաքից բացակայում է, հավանաբար վաղը կլինի»: Նա վերցրեց ինձանից ծրագրերը և ասաց, որ կդնի Գարիկի սեղանին, որ գալուն պես տեսնի: Հաջորդ օրը ես նկատեցի, որ ծրագրերը պրինտերով բազմացնելիս տառերը մի շարք տեղերում, մեկը մյուսի հետ համատեղվել են: Խնդրեցի նորից բազմացնել և գնացի Յունիբանկ այն հույսով, որ դրանք կփոխանակեմ և կտեսնվեմ պարոն Գևորգյանի հետ: Սակայն, դարձյալ եկավ Արմանը և ասաց, որ Գարիկը Կապանից դեռ չի վերադարձել: Ես խնդրեցի, որ Արմանը բերի մեկ օր առաջ հանձնած նախագծերը (բիզնես պլանները), որպեսզի փոխանակենք: Նա բերեց դրանք մեկ այլ երիտասարդի հետ և ասաց՝ «Ինձ թվում է ձեր ծրագրերը առաջին մրցանակ են շահելու»: Ես հարցրեցի՝ «իսկ ինչի՞ց եք ենթադրում, դուք դրանք կարդացե՞լ եք», նա պատասխանեց, որ չի կարդացել, այլ ուղղակի նայել է և տեսնում է, որ դրանք «շաբլոն» չեն և լավն են:

Վերջապես հուլիսի 25-ին ես հանդիպեցի պ. Գևորգյանին և նրան տվեցի «Excel» աղյուսակները 3 թղթի վրա և դրանց «դիսկետը»: Պ.Գևորգյանն աղյուսակները ձեռքում «շուռ ու մուռ» տվեց, նայեց, մտածեց ու դրանք ինձ վերադարձնելով ասաց. «Դրանք պետք չեն, դիսկետը վերցնում եմ, մենք կքննարկենք ձեր աշխատանքները և կորոշենք վերցնել, թե ոչ»: Մենք պայմանավորվեցինք, որ հաջորդ շաբաթվա երկուշաբթի օրը զանգահարեմ և իմանամ արդյունքները: Երկուշաբթի, հուլիսի 29-ին, զանգահարեցի և ստացա հետևյալ պատասխանը՝ «Մենք կարող ենք ձեր աշխատանքները ընդունել նաև այս տեսքով, սակայն դրանք դժվար թե արդյունքի հասնեն այդ վիճակով»: Ես, բնականաբար, հարցրեցի, թե «այդ ի՞նչ վիճակ է», նա ասաց՝ «պակաս բաներ շատ կան, մենք կնայենք ու կմտածենք, թե ինչ կարելի է անել»: Մի խոսքով. հուլիսի 31-ին գնացի Յունիբանկ, հերթապահողը հրավիրեց պարոն Գևորգյանին, որը ներկայացավ և հայտնեց, որ իրենք որոշել են իմ ծրագրերը ետ վերադարձնել: Ես հետաքրքրվեցի, թե ո՞րն է դրա այժմյան պատճառը: Նա ինձ զարմացրեց իր պատասխանով ու «քաջատեղյակությամբ»: Ասաց. «Ձեր ծրագրերը արդեն 3 տարի է, որ ԱՄՆ-ի հետ համատեղ ձեռնարկությամբ իրագործվում են»: Ես այդ «քաջատեղյակությանը» անմիջապես պատասխանեցի և խնդրեցի, որ ինձ մի գրություն տա, որ իմ ծրագրերը առանց իմ իմացության ոչ մեկի կողմից չեն օգտագործվելու: Նա սկզբում շատ համառեց, որ չի տա այդպիսի տեղեկանք, որ ոչ ոք չի կարող դրանք օգտագործել, քանի որ նա ինձ է վերադարձնում դրանք մեքենագրված վիճակում և այլ պատճառաբանություններ: Բայց, երբ ես պնդեցի իմ պահանջը և դա հիմնավորեցի՝ «Չէ՞ որ իմ ծրագրերը, երկուսն էլ ամբողջությամբ գտնվում են ձեր համակարգիչներում և, չէ՞ որ արդեն քանի օր է այս մեքենագրվածները ձեզ մոտ են, որոնց կրկնօրինակները դուք կարող էիք ունենալ հարյուրներով», նա նախ ինձ հանդիմանեց, ասելով. «Ձեզ ո՞վ է խնդրել, որ էլեկտրոնային փոստով ուղարկեք» ու ինձ տվեց մի այսպիսի տեղեկանք.

«Տրված է Հրաչիկ Սարգսի Ավագյանին, առ այն, որ իր կողմից ներկայացված «ՀՀ պեռլիտներից զտափոշիների արտադրության կազմակերպում» և «Հայաստանի Հանրապետության հանքային ջրերից լիթիում, ռուբիդիում և ցեզիում ալկալի մետաղների կորզում» նախագծերը ընդունվել են նախնական ուսումնասիրության համար և ետ են վերադարձվել հեղինակին նախագծերի ֆինանսական տեղեկությունները թերի լինելու պատճառով: Ուսումնասիրության ընթացքում ստացված տեղեկությունները օգտագործվել են միայն նախագծերի վերլուծության նպատակով և այլ նպատակով չեն օգտագործվելու»:

Այստեղ առաջանում է մի շատ բնական հարց, իրավասո՞ւ է, արդյոք, պարոն Գևորգյանը միանձնյա «վերլուծություններ» կատարելու և որոշումներ կայացնելու, թե որ նախագիծը կարելի է ընդունել, և որը՝ հետ վերադարձնել: Դուք, մեծարգո պարոն Աբրահամյան, տվե՞լ եք արդյոք այդ իրավասությունները պ. Գևորգյանին, թե նա ինքնագործունեությամբ է զբաղվում՝ առաջին հայացքից լավ նախագծերին համահեղինակ դառնալու նպատակով, և եթե չի ստացվում իր նպատակը, ապա հետ է վերադարձնում նախագիծը: Չէ՞ որ Ձեր մրցույթում սևով սպիտակի վրա գրված է. «Մրցույթին ներկայացված նախագծերը գնահատվելու են հեղինակավոր ժյուրիի կողմից՝ հետևյալ չափանիշներով...»

Այստեղից, իմ կարծիքով, հետևում է, որ պարոն Գևորգյանը կամ մեկ այլ նման անձ պարտավոր է ընդունել բոլոր նախագծերը և դրանք հանձնել «հեղինակավոր ժյուրիի» «դատին»: Բայց պ. Գևորգյանը կամայականություն է դրսևորել և անհիմն վերադարձրել իմ նախագծերը:

Շատ եմ ցավում, որ վերը նշված նախագծերը ոչ թե գնահատեց «հեղինակավոր ժյուրին», այլ «գնահատեց» պարոն Գևորգյանը:

Մեծարգո պարոն Աբրահամյան, Ձեր դատին եմ ներկայացնում իմ նախագծերից մեկի՝ «ՀՀ հանքային ջրերից լիթիում, ռուբիդիում և ցեզիում ալկալի մետաղների կորզում», ըստ իս ամենաարժեքավոր մասի ֆինանսական տվյալները: Ազատավանի հանքային ջրերի պաշարները լինելով ամենափոքրերը ՀՀ-ում՝ ընդամենը 0.6 լիտր մեկ վայրկյանում, հանքայնացման պարունակությամբ ամենամեծն են ոչ միայն Հայաստանում, այլ շատ ու շատ երկրների հանքային ջրերի մեջ: Դրա հանքայնացման պարունակությունը կազմում է 37,5 գրամ մեկ լիտրում, որից 2 գ/լ բաժին է ընկնում ցեզիումին: Մեր հաշվարկները ցույց են տվել, որ այդ ջրերից մեկ տարում հնարավոր է կորզել 46400 կգ ցեզիումի քլորիդ և 5560 կգ ցեզիումի կարբոնատ, և, եթե դրանք միջազգային շուկայում վաճառվեն 2 անգամ ավելի էժան, քան վաճառվում են ԱՄՆ-ի «Ալդրիչ» քիմիական ընկերության կողմից, ապա կորզող ձեռնարկության տարեկան շահույթը կարող է կազմել ավելի քան 12 մլն դոլար (ԱՄՆ): Ասեմ նաև, որ կորզող ձեռնարկությունը հնարավոր է կառուցել ամենաշատը 6 ամսում, իսկ կապիտալ ներդրումների գումարը կարող է կազմել ընդամենը 600 հազար դոլար:

Նշված նախագծով առաջարկվում է կառուցել երկու նմանատիպ գործարան, մեկը Հանքավանի և երկրորդը՝ Ազատավանի հանքային ջրերի հենքի վրա: Եվ, այդ ձեռնարկությունները, մեծ շահույթներ ապահովելուց բացի, ունեն նաև մի քանի առավելություններ.

– Դրանք կլինեն էկոլոգիապես շատ մաքուր արտադրություններ,

– Նշված աղերը կորզելուց հետո էլ հանքային ջրերը դարձյալ կարող են ծառայել իրենց նպատակներին (կարելի է նույնիսկ օգտագործել լոգարաններից գետերը թափվող ջրերը),

– Յուրաքանչյուր արտադրությունում էլեկտրաէներգիայի ծախսը կլինի նվազագույնը՝ արտադրության նպատակներով ձեռնարկությունում կարող է աշխատել մեկ էլեկտրական շարժիչ 4 կվտ/ժամ կարողությամբ (Հանքավանում նույնիսկ դա էլ անհրաժեշտ չէ՝ ջուրը արտադրություն կհասնի ինքնահոս),

– Արտադրանքի փոխադրման համար բարդություններ չեն լինի, աշխարհի ամենահեռավոր երկրներ կարելի է հասցնել ինքնաթիռով, իսկ մոտակա երկրներ՝ ավտոմեքենաներով (Ազատավանի ջրերից տարեկան կորզվելու են մոտ 52 տոննա ցեզիումի աղեր, իսկ Հանքավանի ջրերից՝ 16,5 տոննա լիթիումի, ռուբիդիումի և ցեզիումի աղեր):

Մեծարգո պարոն Աբրահամյան, այս հակիրճ նկարագրությամբ Ձեր «դատին» եմ ներկայացնում իմ նախագծերը և խնդրում եմ հետազոտել ու գնահատել դրանք հետ վերադարձնելու պատճառաբանության հիմնավորվածությունը, ինչպես նաև դրանց կարևորությունը Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի հայ գործարարների համար:

Ինչպես երևում է, շորթելու տարբեր ձևեր ու եղանակներ կան, որոնցից մեկն էլ մրցույթ շահելու հեռանկարներ խոստացող նախագծերին համահեղինակ դառնալն է, որին էլ ձգտում էր պարոն Գ.Գևորգյանը:

Իմ խորը համոզմամբ՝ Յունիբանկը և Ձեր միությունը պետք է դրսևորեն շահագրգռվածություն և թույլ չտան կամայականություն նման կարևոր գիտատնտեսական հարցում:

Հարգանքներով՝ Հ.ԱՎԱԳՅԱՆ
Ծրագրի հեղինակ, գիտ. դոկտոր
5 օգոստոսի 2002թ.

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ. Տպագրելով Հ.Ավագյանի սույն նամակը, խմբագրությունը հիշեցնում է իր ընթերցողներին, որ տարիներ առաջ «Եվրասիա» հիմնադրամի կողմից հայտարարված մրցույթին մասնակցելով, թերթը արժանացավ նույն ճակատագրին՝ մութ առաջարկներ, «կարծիքներ» ու... մերժում՝ առաջիկայում նման ծրագրերին մասնակցելու առաջարկով: Այն ժամանակ ամեն ինչ հասկանալի էր: Իսկ այժմ մրցույթի հրավիրում են մի քանի կազմակերպություններ և այդ թվում այնպիսի հեղինակավոր կազմակերպություն, ինչպիսին Ռուսաստանի հայերի միությունն է: Ինչ է, անցած տարիներին բան չի՞ փոխվել Հայաստանում:

Միաժամանակ նշում ենք, որ իր առաջարկությունների և ուսումնասիրությունների մասին Հ.Ավագյանը բազմիցս հանդես է եկել «Գիտություն» թերթում՝ միշտ դրսևորելով ոչ միայն գիտական-տնտեսական շահագրգռվածություն, այլև երկրի, նրա հարստությունների նկատմամբ բարձր մտահոգության, իսկական հայրենասեր մարդու կեցվածք:

ԾԱՆՐԱԿՇԻՌ ՆԵՐԴՐՈՒՄ ՀԱՅ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

(Սկիզբը էջ 5)

Մենագրության մեջ լայն տեղ է հատկացված արտագաղթը մեղմելու և տնտեսական առաջընթացը ապահովելու խնդրի հրատապությանը: Որպես հիմնական խնդիր առաջ է քաշված երկրի սոցիալ-տնտեսական զարգացումը, զբաղվածության խնդրի լուծումը:

Հեղինակը խորը տագնապ ապրելով արտագաղթի վերաբերյալ՝ միանգամայն իրատեսական է համարում արտագաղթի իրավական կարգավորման, ավելցուկ աշխատուժի ժամանակավոր արտահանման կառավարման խնդիրների լուծումը: Առ այսօր արտագաղթը տարերային է և այն կրում է գրեթե անվերադարձ բնույթ: Դեռևս չի լուծված մեր երկրի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական խնդիրներից մեկը՝ գործազրկության կրճատումը և իսպառ վերացումը: Այժմ մեր տնտեսությունը խորը փոփոխությունների շրջան է ապրում, վերջին երկու տարում նկատվում են կայուն տնտեսական աճի միտումներ, որոնք հուսադրող են: Սակայն երկրի ներդրումային թափանիվը դեռևս լիարժեք չի գործում, նյութական ռեսուրսները սահմանափակ են, պետական բյուջեի սուղ միջոցներով հնարավոր չի լիարժեք ձևով լուծելու նոր աշխատատեղերի ստեղծման հարցը, մեղմելու արտագաղթը, ապահովելու լրիվ զբաղվածությունը: Այս իրավիճակում արտագաղթի միջպետական կարգավորումը, իրավական դաշտի ստեղծումը հնարավորություն կտա քաղաքակիրթ նորմերով մասնակցելու աշխատանքի միջազգային բաժանմանը: Այստեղ կարևոր է նաև այն հանգամանքը, որ միջպետական համագործակցության պայմանագրերով իսպառ բացառվի արտագաղթողների նկատմամբ տեղական իշխանությունների կողմից խտրականության և անհանդուրժողականության դրսևորումը: Նման համագործակցության հուսալի արդյունքները դրսևորվում են Ռուսաստանի Դաշնության հետ տնտեսական կապերով:

Ի մի բերելով Հայաստանի բնակչության վերարտադրության, տեղաշարժերի և ժողովրդագրության երկդարյա ուսումնասիրությունը, հեղինակը խորը ցավով է անդրադառնում հայ ժողովրդի պատմական ընթացքի դառը կորուստներին:

Այնուամենայնիվ, հեղինակը համակված է լավատեսությամբ: Նրա անդրդվելի համոզմունքն է, որ ի վերջո մեր երկիրը կմտնի իր սովորական զարգացման բնականոն հունի մեջ: Այդ լավատեսությամբ վարակվում են նաև ընթերցողները:

Ակադեմիկոս Վ.Խոջաբեկյանի մենագրությունը անվիճելի նվաճում է, խոշոր երևույթ մեր տնտեսագիտական գրականության մեջ:

ՎԵՏՈՒՆԻ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
(տնտեսագիտության թեկնածու)
ՎԱՐԴԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ
(պատմական գիտությունների դոկտոր)

ԱՐԵՎԸ ԵՎ ՄԵՆՔ

Մենք սիրում ենք արևը: Իզո՞ւր են մեզ ասում՝ Արևի երկիր Հայաստան: Բայց արևից պետք է ճիշտ օգտվել: Եկել է 2002 թվականի աշունը: Շոգ է. մարդիկ շատ հեղուկ են օգտագործում, սիրում են օգտվել բնության զով անկյուններից: Բայց հիմա նաև խոտհնձի ու բերքահավաքի ժամանակն է: Ի՞նչ զով անկյուն կարող է գտնել խոտհարքներում, այգիներում աշխատող գյուղացին: Իզո՞ւր են լեռնային շրջանների բնակիչները կատակով ասում. առավոտյան տղամարդիկ գնացին խոտհնձի, երեկոյան «տապակված» տուն վերադարձան: Ուլտրամանուշակագույն ճառագայթների առատությունը հրապուրում է երիտասարդներին, մոռանալով, որ, չափից ավել այդ ճառագայթները խիստ նենգ են, վտանգավոր. այրված, պոկված մաշկը դեռ ոչինչ է այն վտանգի համեմատ, որ չափից ավել արևահարումը կարող է վնասել մարմնին: Հարկավոր է երբեք չմերկանալ, արևի տակ չմնալ գլխաբաց: Սա պարտադիր է բոլորի համար:

Չափից ավել արևահարումը կարող է դառնալ մաշկի և այլ քաղցկեղային երևույթների պատճառը:

ՄԵՆՔ ՉԵՆՔ ՈՒԶՈՒՄ ՈՐԵՎԷ ՄԵԿԻՆ ԱՀԱԲԵԿԵԼ, ԻՍԿ ԶԳՈՒՇԱՑՆԵԼԸ ՄԵՐ ՊԱՐՏՔՆ Է...

20-ՐԴ ԴԱՐ. ՈՎ Է ԱՄԵՆԻՑ ՀԱՏ ՄԱՐԴ ՍՊԱՆԵԼ

Անտարակույս, 20-րդ դարի ամենախոշոր ոճրագործները եղել են Հիտլերը և Ստալինը, որոնց մեղքով զոհվել են տասնյակ միլիոնավոր մարդիկ: Սակայն ո՞վ է իր իսկ ձեռքով ամենաշատ մարդ ուղարկել հանդերձյալ աշխարհ: Վերջիններիս մեջ առաջնության դափնին պատկանում է ամերիկյան «Բ-29» ինքնաթիռի անձնակազմին, որը 1945 թվականի օգոստոսի 6-ին «Փոքրիկ» անունով ծածկագրված միջուկային ռումբ նետեց ճապոնական Հերոսիմա քաղաքի վրա: Այդ ռումբի պայթյունից զոհվեց 140 հազար մարդ: Ինքնաթիռի անձնակազմը բաղկացած էր 12 հոգուց: Ռումբը նետելու պահին ինքնաթիռի ղեկին էր օդաչու Թոմաս Ֆերեբին, որն էլ սեղմեց ռումբը գցելու կոճակը: 1990 թվականին, երբ Ֆերեբին 70 տարեկան էր, մի հարցազրույցում հայտարարեց, որ չի զղջում իր արածի համար և ներողություն խնդրելու մտադրություն չունի, քանի որ նրա կարծիքով, Հերոսիմայի վրա նետված միջուկային ռումբի շնորհիվ էր, որ ավարտվեց երկրորդ համաշխարհային պատերազմը: Բացի այդ, չէ՞ որ ինքը չգիտեր, թե ինչ հետևանքներ կունենա ռումբի պայթյունը: Ինքը առաջադրանք ուներ՝ Հերոսիմայի վրա հատուկ ռումբ նետել (գաղտնի զենք), և կատարել է առաջադրանքը:

Անձնակազմի միակ անդամը, որը նախապես տեղյակ էր ռումբի ուժի ու հետեվանքների մասին, գնդապետ Տիբբետսն էր:

Միջուկային պայթյունը հրեշավոր էր: Ռումբի պայթյունի էպիկենտրոնից 800 մետր հեռավորության վրա գտնվողները մի ակնթարթում վերածվեցին ծխացող ածխաբեկորների: Մնացածները մահացան օդային և ջերմային ալիքի հարվածից, ճառագայթահարումից և ավերվող շենքերի փլատակների տակ: Սակայն «Բ-29» ինքնաթիռի անձնակազմի բոլոր անդամները չէ, որ հանգիստ էին, ինչպես Թոմաս Ֆերեբին:

Կապիտան Լյուիսը հիշում է. «Ճշմարիտ է, մենք սպասում էինք ինչ-որ սարսափելի բանի: Բայց այն, ինչ մենք տեսանք սեփական աչքերով, առաջ բերեց այն զգացողությունը, որ մենք 20-րդ դարի հրեշակերպ զինվորներ ենք: Հետդարձի ճանապարհին բոլորս լիովին շփոթված էինք: Մենք տեսել էինք ամենասարսափելի բանը, որ երբևէ մարդը կարող է տեսնել: Զարհուրելի էր գիտակցել, որ մի ակնթարթում երկրի երեսից անհետացավ մի հսկա քաղաք»:

Մարդասպանության մրցույթում երկրորդ տեղը բաժին ընկավ ամերիկյան այն ինքնաթիռի անձնակազմին, որը միջուկային ռումբ նետեց ճապոնական Նագասակի քաղաքի վրա: Ռմբակոծության պահին ինքնաթիռի ղեկին էր մայոր Սուինեյը, «Հաստլիկը» միջուկային ռումբը քաղաքի վրա նետելու կոճակը սեղմեց լեյտենանտ Անվորտը: Այդ պայթյունից զոհվեց մոտ 80 հազար մարդ, 35 հազարն էլ մահացան հետո՝ ճառագայթային հիվանդությունից:

ՌՈՒՄԲԻ ՍՏԵՂԾՈՂԸ

Եթե մարդասպանության առաջնության մրցույթում մենք առաջին տեղերը շնորհում ենք ամերիկյան վերոհիշյալ երկու ինքնաթիռների անձնակազմերին, սխալ կլինի մոռանալ այն մարդուն, որը անմիջականորեն մասնակից է եղել այդ հանցագործությանը: Խոսքը վերաբերում է Ջուլիուս Ռոբերտ Օպենհեյմերին (1904 – 1967):

Ըստ էության, այս մարդը չէ, որ ստեղծել է միջուկային ռումբը: Որպես հիանալի կազմակերպիչ, Օպենհեյմերը, գլխավորապես էյնշտեյնի և Սցիլարդի ճնշմամբ, ղեկավարել է Լոս-Ալամոսյան լաբորատորիան և ճանապարհ հարթել «Մանհեթթեն» կառավարական նախագծի համար: Սույն նախագիծը առաջադեմ ֆիզիկոսների պատասխանն էր Հիտլերին, ի դեպ՝ նաև Ստալինին:

Լինելով խոշոր գիտնական (Ռեզերֆորդի աշակերտը, Բորի և Դիրակի ընկերը), Օպենհեյմերը կարողացավ հասկանալ ու գնահատել այն, ինչ կատարվում էր իր լաբորատորիայում: Որպես պացիֆիստ և ծախ ուժերի կողմնակից, նա ամեն կերպ աշխատում էր դիմադրել միջուկային ռումբը ռազմական նպատակներով օգտագործելու մտայնությանը: Սակայն 1945-ի այն հեռավոր օրերին նա տվեց իր համաձայնությունը՝ միջուկային ռումբեր նետել ճապոնական Հերոսիմա և Նագասակի քաղաքների վրա: Երբ Օպենհեյմերին հարցրին, թե նա ինչ զգաց պայթյունի պահին, միջուկային ռումբի ստեղծողը մեջբերում կատարեց հինդուսների «Բհագավադ զիտա» սուրբ գրքից.

– Ես վերածվում եմ Մահի և Աշխարհները սասանողի:

Սակայն Օպենհեյմերը մանհեթթենյան ծրագրի մասնակիցների մեջ միակ խղճմտանք ունեցող գիտնականն էր: Ռումբի մյուս ստեղծողներն աչքի էին ընկնում ընդգծված ցինիկությամբ և անհոգիությամբ: Այդ մասին է խոսում թեկուզ և այն հանգամանքը, որ նրանք իրենց առաջին միջուկային ռմբակոծությունը կոչեցին «Երրորդություն»: Իսկ փաղաքշական անուններ ստացած «Փոքրիկն» ու «Հաստլիկը» երկրի երեսից վերացրին ճապոնական բազմամարդ քաղաքներն ու նրանց բնակիչներին:

* * *

Ի դեպ, խորհրդային հետախուզության տվյալներով, Պենտագոնի քարտեզներում, ճապոնիայից հետո, հայտնվեց միջուկային երկրորդ նշանակետը: Առաջին թիրախը Խորհրդային Միության մայրաքաղաքն էր՝ Մոսկվան, և ապա՝ Հյուսիսային Պալմիրան՝ Մոսկվայի համար նախատեսված էր 8 ռումբ, իսկ Սանկտ Պետերբուրգի՝ 7:

«ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ԹԵՐԹԸ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՀՈՎԱՆԱՎՈՐՉԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ:

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հայտնում ենք, որ ՀՀ ԳԱԱ ֆիզ.մաթ. և տեխնիկական գիտությունների բաժանմունքի կողմից 2002թ. «Գիտություն» թերթի 5-րդ համարում հայտարարված մրցույթը «Գառնիի տիեզերական աստղագիտության ինստիտուտի» ՓԲ Ընկերության գործադիր տնօրենի թափուր պաշտոնի զբաղեցման համար, նույն բաժանմունքի բյուրոյի հ.8 նիստի որոշմամբ չեղյալ է համարվել՝ Ընկերության կանոնադրության 8.4 կետի պահանջներին հակասելու պատճառով:

Նկատի ունենալով վերոհիշյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1044 հոդվածի 8-րդ կետի պահանջներով, մրցույթը համարել վերացված:

ՀՀ ԳԱԱ ՖԻԶԻԿԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

«ԳԻՏՈՒԹՅՈՒՆ»
Գլխավոր խմբագիր՝
ՎԼԱԴԻՄԻՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ
Երևան – 19, Մարշալ Բաղրամյան 24դ, հեռախոս՝ 56-80-14:
ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն:
Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448: Ստորագրված է տպագրության՝ 20.09.2002թ.
"ГИТУТЮН" ("Наука") – газета НАН РА